

Արևո

ԱՄԱՍԱԳԻՐ

ԿՐՈՆԱԿԱՄ - ԳՐԱԿԱՄ - ԲԱԼԱԿՐԱԿԱՄ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՄԱՆԱԿԱՆ ԵՐԱՎԱՆԻ ՀԱՅ ՊԱՏՐԻԿԱՐԵՆԵՐՆ



ՓԱԿՈՒՄՆ ՅՈՒԵԼԻՆԱԿԱՆ ՏՈՐԻԾ

Ֆ. ԴԱՐՈՂԻՐՁԻ ՆՈՀԱՆԱԿՈՒԹԵԱՆ ՍՐՋԱՎՈՐԻՆԱՅՑ ԶՈՐԱՎՈՐԱՅԻ ՄԵՐՈՅ
ՀԱՅԱՐ ԵՐԵՍՈՒՆ ԵՒ ԳԵՂ ԳԿԱՅԻՑՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

— Հարաւային Ամերիկայի Նույրակուրիւնը.

Geben

257

ԿՐՈՆԱԿԱՆ

— Թարգմանչաց Հոգին.

ՀԱՅԿԱԶՈՒՆ ՎՐԴ. ԱՅՐԱՀԱՄԵԱՆ 261

ԲԱՆԱՍՏԵՂԱԿԱՆ

— Վարդանի Սիրտը.

ԵՊԻՎԱՐԴ 265

— Անմեղուրիւն.

ԶՈՒԵՆ Ա. Զ. 267

ՀԻՆ ԵԶԵԲ

— Բան Պիտանի.

ՀՐԱՍ. Ն. ԵՊՈ. ԾՈՎԱԿԱՆ 268

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

— Ասարդոնի հատուածակողմը.

ԱՆՈՒՇԱԽԱՆ Ա.ԲՊ. ԶՊՁԱՆԵԱՆ 269

— «Հայ Բուսաշխարհ».

ԿԱՐԱՊԵՏ ԳԱԲԻԿԵԱՆ 274

ԸՆԿԵՐԱՑԻՆ

— Մասձելու Արուեստը.

Ա. Մ. 278

ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՆՔԵՐ

— Կայիփոսի Ս. Յակոբ Մծբնայ Հայրապետի վանք.

Ն. ԵՊՈ. ԾՈՎԱԿԱՆ 283

ԵՐԵՐԴ Տարեկից Երջանկայիշատակ Տ. Կիւրեղ Բ. Պատրիարքի.

285

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԵՆ

— Եկեղեցականք - Բեմականք.

287

— Պատօնականք.

287

ՍԻՈՆԻ Տարեկան բաժնեգիւն Է՝ բոլոր Երկիրներու համար՝ Ս.ՅՈՒ. Շիլին 15

Redaction of the Armenian Monthly SION

Armenian Patriarchate,

P. O. B. 4001

Old City - Jerusalem

Via Amman (Jordan)

“SION,” an Armenian Monthly of Religion, Literature and Philology

*Printed in
JERUSALEM*

≡ Ս Ի Ռ Ա Ն ≡

ԻԶ. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ

1952

≈ ՀՈԿՏԵՄԲԵՐ ≈

ԹԻՒ 10

ԽՄԲԵՄԲԱԿԱՆ

ՀԱՐԱՒԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՆՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ

Տեղապահ Սրբազն Հօր և Ս. Աթոռոյ Պատ. Տնօրիչն ժողովոյ կարգադրութեամբ, հինգ ամիսներ առաջ Գեր. Տ. Սերովի Վրդ. Մանուկեանը Ֆրանսայէն, ուր կը մնայ այժմ իր Կաթոլիկոսական Պատուիրակ Եւրոպայի Հայոց, կը մեկնէր Հարաւային Ամերիկա, հոն ևս, մեր այդ հեռաւոր, Եկեղեցանուէր ու ազգասէր զաղութեամբ մէջ հանգանակութիւններ կազմակերպելու ի նպաստ երուսաղէմի Առաքելական Ս. Աթոռին և անոր հովանին վայելող մերազն ժողովուրդին:

Երախտախառն ուրախութեան զգացումներով սրտազին պարտք կը նկատենք յայտարարելու, և ասիկա ի պատիւ Հարաւային Ամերիկայի մեր արենակիցներուն, թէ ամենուրեք Ս. Աթոռոյ նուիրակը դիմաւորուած է սիրով և կարեկցութեամբ, և որ իր կարգին Պուէնոս Այրէսի և Հարաւային Ամերիկայի բոլոր հայաշատ կեդրոններու մէջ զտնուող հոգեսէր և Հայ Եկեղեցւոյ զգացումներով տողորուած սիրտերուն բաշխած է նախ՝ Քրիստոսի Տնօրինական վայրերու օրհնութիւնները, խօսելով Հայ Երուսաղէմի կրօնական ու ազգային սրբութիւններէն, ազգապարձան իրաւունքներէն, մազաղաթներու մէջ ծրարուած զեղցկութիւններէն, և այն ողիէն՝ որ Երուսաղէմի գարաւոր այս սրբութեան յատուկ է, և որուն ի սէր և ի խնդիր ի զիշերի և ի տուընջեան անձնագոհ սերունդներ գարերէ ի վեր մինչև մեր օրերու այս մոռայլը, ըրած են իրենց կարելի լաւագոյնը, որպէսզի շմարի ոչ մին այն կանթեղներէն՝ զորս մեր երանաշնորհ նախնեաց ջերմեռանդութիւնը վառած ու զետեղած է Տնօրինական ու ազգային Սուրբ Տեղեաց մեր իրաւունքներուն վերև, մեր Եկեղեցւոյ պատույն և ազգին միմիթարութեանը համար:

Նուիրական պարտքի այս զգացումով, Հարաւային Ամերիկայի մեր հաշրագատները անխատիր, շթերացան մխիթարութեան առիթը հանդիսանալ իր Եկամուտներէն առայժմ զրկուած Ս. Յակոբիանց ազգապարձան Հաստատութեան և Պաղեստինի աղիտանար, տնաւեր և ընչազուրկ մերազն ժողովուրդին, որ այնքան պէտք ունի իր արենակիցներու օժանդակութեանը: Հանգանակութեան զործը Հարաւային Ամերիկայի մեր բոլոր հայաշատ զաղութներուն մէջ, Պուէնոս Այրէսին սկսեալ, եղած է աւելի քան զոհացուցիչ: Մեր կարիքը դիմաւորելու

այս ազնիւ կերպին և լիարուռն փոյթին մէջ, Հարաւային Ամերիկայի մեր հարազատները անդամ մը ևս կը նուիրագործեն բարիքին զգացումը, ի յայտ բերելով իրենց ցեղային ու հոգեկան ինքնութիւնը:

Կարեկցելու և տալու զգայարանքը յաւետ կենդանի իրողութիւնը եղած է մեր ժողովուրդին, որով ան շանացած է միշտ կենսունակ պահել ինքզիւք ու իր դարերը, հակառակ իր վրայ խուժող բազմապիսի աղէտներուն: Պաշտպան հանդիսանալ իր նմանին և արենակցին, երբ ան պէտք ունի աջակցութեան, սրտապին տուրքը վճարել իր կրօնական ու ազգային Հաստատութիւններուն, անոնց գոյութեան և պայծառութեան ի ինդիք, անյետաձղելի պարտականութիւններ են զորս կարելի չէ զզալ երբ մարդ Հայու զգացում ունի իր սրտին խորը և արիւն՝ իր երակներուն մէջ: Ահա այդ նուիրական և սիրելի զգացումն է որ Հարաւային Ամերիկայի մեր հարազատները մզած է բարիքի, կատարելու համար իրենց կրօնական ու ազգային պարտքը և անոնց նուիրականութիւնը լուրջ խոկումներով կենդանի պահելու համար իրենց մէջ:

Հարաւային Ամերիկայի Հայութիւնը, առանց շողոմի և ներկայ հանդանակութեան պարագան օգտագործելու զգացումին, պէտք է ըսել թէ այսօր կը ներկայացնէ մեր ամենէն ուշագրաւ գաղութներէն և տարրերէն մին: Կամքի և աշխատութեան ցեղային բարի յատկութեանց շնորհիւ, զաղութը այսօր ոչ միայն իր մէջ կը հաշուէ նիւթական շօշափելի արդիւնքներու տիրացած բազմաթիւ անհատներ, այլ նաև անոր մտաւոր ու բարոյական մտահոգութիւններով տողորուած անձնաւորութիւններ, որոնք հաւատարիմ իրենց ցեղի մեծ աւանդութիւններուն, կ'ընեն իրենց կարելին, օժանելու տեղույն հայութիւնը կրօնական և կրթական Հաստատութիւններով, արծարծ ու տեական լնելու համար Հայրենիքէն, ազգային զանդուածներէն ու նուիրականութիւններէն հեռու մեր այդ հարազատներուն դոյլութիւնը, Նիքոլայան, Պէրկամալի, Տիարպէքիրեաններ, Զինոգեան, Հայկազ Սարի, Սարաֆեան, Մելիքեան և ուրիշներ, վստահ ենք թէ միայն նիւթական բարիքներով օժտուած հայեր չեն, և ժամանակի մը համար չէ իրենց գործն ու յաջողութիւնը Հարաւային Ամերիկայի հեռաւոր Հայ զաղութի ծոցին մէջ: Կը սիրենք յուսալ վաղուան մեր տոհմային տարեգրութեանց մէջ ողջունել անոնց անունն ու գործը, կարգին անոնց որոնք դեր մը կատարեցին մեր տոհմային կեանքին մէջ: Շամիրեաններ, Պարամեաններ, Մուրատեաններ և իրենց սերունդը Հնդկաստանի Հայ զաղութին մէջ, Նուպարեաններ և Մելքոնեաններ Եղիպատոսի մէջ, Կիւլպէնկեաններ, Գարակէօգեաններ Ամերիկայի մէջ, և տակաւին բազմաթիւ ուրիշներ մեր զանազան զաղութներէն, դադրած են այլեւս պարզ անհատներ ըլլալէ և դարձած նուիրական անուններ, շնորհիւ իրենց զգացումին և զործին, համապատասխանող զիրենք ծնող ցեղին ողիլին և մեծագործութեան: Անոնք բոլորը իրեր սերմ բարի, անարծաթ բայց լեցուն սիրտով, ինկան օր մը օտարութեան ծոցը, և եթէ կըցին մեծագործ և օդտակար անհատներ դառնալ, ատիկա շնորհիւ իրենց մեծ զգացումն և ազգային կարիքներուն նկատմամբ իրենց ցոյց տուած սիրայօժար փոյթին է միայն:

Իրական երջանիկներն ու մեծութիւնները, շքեղ ապարանքներու մէջ բնակողները չեն, այլ անոնք՝ որոնք ուրիշներու երախտազէտ սիրտերուն մէջ

զիտեն ապրիլ։ Հարստութիւնը անէծք է և աղէտ, երբ բարիքի և մեծագործութեան առիթ չի հանդիսանար։ Մեր Եկեղեցւոյ աւանդական աղօթքին համաձայն, երանելի են և անմոռաց բոլոր անոնք՝ որոնք Եկեղեցի կը շնորհ և հուիրատու կը հանդիսանան իրենց ժողովուրդին։ Յաւիտենական է Աւետարանին խօսքը, թէ գաւաթ մը պաղ ջուրն անգամ անվարձ չի մնար, զի մարդն է որ կ'արժէ ու կը մեծցնէ բարիքը։

Ուրախ և միսիթարուած ենք անգամ մը ևս այս էջերուն մէջ կարենալ յայտարարելու, երախտազիտական չերմ զգացումներով, թէ Պաղեստինի աղէտէն ի վեր, արտասահմանի մեր արենակիցները անտարբեր չզտնուեցան Երուսաղէմի Ս. Աթոռին նկատմամբ, ըրին անհրաժեշտ լաւազոյնը, վառ պահելու համար Ս. Գլխադրի սեղանին առջե կախուած կանթեղը և պահպանելու 1500 տարիներու ազգային այս մեծ ժառանգութիւնը, զին սերունդներու արեան և զոհողութիւններու։ Մեր վանքերն ու անոնց հոգեոր զինուորութեան նուիրուող պահապանները, համաձայն մեր աստուածարեալ նախնեաց, են «սիւնք աշխարհի, պարիսպ ընդդէմ թշնամւոյն և աստեղք լուսատուք յերկրի»։ Վստահ ենք թէ ոչ մէկ ճշմարիտ հաւատացեալ Հայ պիտի ուզէր որ խախտին այդ սիւները և աղօտէր այն լոյսը որ մեր հոգին է, մեր մտքին ու խղձնն, կեանքի մեր ճամբան լուսաւորող։

Դժուարութիւններ՝ որոնց առջե կը գտնուի այսօր ազգին այս Ցունը, այնքան մեծ են, որ կը փորձուինք մտածել թէ նոր հրաշքի հաւասար իրադարձութիւններ անհրաժեշտ են, կարենալ փրկելու համար զայն։ Անոնք, որոնք խոնարհաբար, առանց փրկիչներ ըլլալու յաւակնութեան, բազմապիսի այս դժուարութեանց մէջէն կը ջանան կացութիւնը դիմաւորել, մեր ժողովուրդին պատկանող խոնարհ հոգիներ են, և կը կատարեն այս դժնդակ օրերու ընդմէջէն գործ մը՝ որ միայն զնանատութեան արժանի է, և անոնց աղերսազին կոչերը միայն ու միայն ի հաշիւ ազգային այս ժառանգութեան են։

Բաել թէ Հայ Երուսաղէմը ազգին կը պատկանի, հաստատել է մեր տոհմային ամենէն ամուր սկզբունքներէն մին, իսկ շահազրդուուիլ նման Հաստատութիւններու նիւթական, մտաւորական ու բարոյական կեանքով, ի գործ գնելով կարելի հակակշիռը օրէնքի ճամբով, իրաւունքն է Հայ ժողովուրդին։ Այդ գործը կրնայ և պարտի ընել ու ընել տալ ամենէն աւելի մեր պարկեշտ մտաւորականութիւնը, այսինքն անոնք որոնք ո՛չ միայն զրչի և խօսքի չնորհը ունին, այլ մանաւանդ անոնք որ կը հաւատան նաև զաղափարի և սկզբունքի նուիրականութեան, և առանց երկրնարանքի կ'ընդունին թէ Ազգին դարաւոր կեանքին մէջ փրկարար գեր կատարած է Հայ Եկեղեցին և արժանի է միշտ զինքը ծնող ժողովուրդին համարումին և հոգածութեանը։

Տրտմօրէն անարդար կը զտնենք մեր մամուլի մէկ մասին անճիշդ և անպատշաճ արտայայտութիւնները Հայ Երուսաղէմի զինուորեալ — սիրելի է մեզ կրկնել միշտ այս ճիշդ որակումը — Միաբանութեան հասցէին, սակաւաթիւ բայց նուիրեալ այդ տարրերուն հանդէս պարզելով սկեպտիկ կեցուածք մը, նկատելով զանոնք քեռ մը լոկ՝ յոզնատանչ Հայ ժողովուրդի կոնակին դրուած։ Փոխան անիմաստ և չարամիտ գատափեատմներու, աւելի ճիշդ պիտի ըլլար զատահութեամբ և անվերապահ աշակցութեամբ քաջալեր հանդիսանալ

Հաստատութեան համար ի զիշերի և ի տուընչեան աշխատող Միաբանութեանը՝ և ի հարկին ստեղծել անհրաժեշտ շարժումը ի նպաստ այս գարաւոր Աթոռին և անոր եկեղեցական ու ազգային իրաւունքներու պահպանմանը, ողջամիկ քըն-նադատութեան լոյսին տակ երեան բերելով եղածն ու ըլլալիքը, և շմորեցնել հանրային կարծիքն ու խոճմտանքը իր կրօնական ու ազգային Հաստատութիւն-ներու նկատմամբ, անտեսելով այն ինչ որ եղած է և կ'ըլլայ ամէն օր, ի զին ամենէն ծանր զոհողութիւններու:

«Վանքին գէմ չենք, բայց գէմ ենք վանականներու» արտայայտութիւնը կը մատնէ հոգեբանութիւն մը, որուն չենք ուզեր անդրադառնալ այս էջերուն մէջ: Անտարակոյտ կարելի չէ ըմբռնել վանք մը առանց վանականներու, իսկ հակառակ ընթանալ Հաստատութեան ծառայութեան նուրբուածներուն, խաչաձեւ-լու չափ անոնց համեստ գործը, պիտի նշանակէր ուզեր որ կործանի Հաստատու-թիւնը: Կը սիրենք մտածել որ վերի արտայայտութիւնը սկզբունք մը չէ, այլ պա-հանջի վերածուած փափաք մը, Աթոռը աւելի պայծառ ու բարզաւաճ տեսնելու, այլապէս վերի արտայայտութիւնը արամախոնելու ամենէն զռեհիկ կերպերէն մին է, նուազազոյն սովիետութիւնը, զոր մարդ կրնայ թոյլ տակ ինքզինքին:

Անտեղի և անիմաստ երկիւղներու անձնատուր ըլլալու պէտք չկայ, հա-կառակ աղէտին և անոր հետեանքով ստեղծուած գժուարութիւններու, Աստուած բոլորովին լքած չէ կրօնական ու ազգային այս ծունը, չորսիւ չպակսող օժան-դակութիւններուն, անալլայ շարունակուած է մեր կրօնական, կրթական և ժողովրդային օժանդակութեան գործը, և Ս. Յակորեանց սակաւաթիւ Միաբա-նութիւնը իրեն օժանդակ և զօրավիգ եղող իր ժողովուրդին հետ միասին, կը շարունակէ ընել իր կարելին, պահելու և պահպանելու ազգին այս մեծ ժա-ռանգութիւնը օրուն շուրջ ստեղծուած գժուարութիւնները օրէ օր աւելի քան ամբակշիր կը դառնան:

Ուըախ և երախտապարտ ենք այս տեսակէտով Հարաւային Ամերիկայի մեր հարազատներուն, որոնք ընդառաջելով Ս. Աթոռոյ օգնութեան կոչին և իր նուրիակի միջոցաւ կարկառուած ձեռքին, ամիսներէ ի վեր կը շարունակեն ընել իրենց եղբայրական օժանդակութիւնը յօդուած Ս. Աթոռոյ և վանքաբնակ մերազն ժողովուրդին:

Մեր սրտագին չործակալութիւնը նախ Պուէնոս Այրէսի Հոգեւոր Հովիւ մեր հարազատին, Հոգ. Տ. Յարութիւն Վրդ. Մուշեանին, որ Ս. Աթոռոյ նուրի-րակի մեկնելէն առաջ զգացուցած էր ամենուրեք Ս. Աթոռոյ կարիքը, և իր սրտագին քարոզներով և հրատարակութիւններով շինած էր արամազրութիւնները արդիւնաւոր հանգանակութեան մը ի հաշիւ, անձամբ նոյնպէս բերելով իր եղ-բայրական աջակցութիւնը Ս. Աթոռոյ ժրաշան նուրիակին:

Մեր անխան երախտազիտութիւնը նոյնպէս Հարաւային Ամերիկայի բոլոր թեմերու հանգանակիչ մարմիններուն, մասնաւորաբար Աթիւրո Սար-զիսեանի, Գէորգ Սարտֆեանի, Գրիգոր կառավարեանի, և Յովհաննէս Պալ-եանի, և բարեսէր ու ազնուածիտ հարազատներուն, որոնք զիտցան Հայու վայել զգացումներով գիտաւորել մեր կարիքը: Տէրը թող վարձահատոյց ըլլայ անոնց բոլորին, մէկի փոխարէն հազարապատիկ հատուցանելով անոնց:

Երանի ողորմածաց զի նոքա ողորմութիւն գտցեն:

ԿՐՈՆԱԿԱՆ

ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՀՈԳԻՆ

(ԽՈՍԿԱՄ, ՄՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՏՕՒԻՆ)

«Որք զերկաւոր մեծաթիւն փառաց խաւար կաշեցին» : (ՇԱՐԱԿԱՆ)

Առումը որոնց յիշատակին առջև այսօր ամէնքս կը ծնրագրենք, Ե. դարէն մինչեւ ժթ. դար երկարող անջրպետին՝ հոյակապ գէմքերն են, որոնք լուսաւոր փարոսները եղան Հայաստանից Եկեղեցին։ Դարեր վերջ շարականագիրը, շատ հաւանաբար վարդան Վրդ., կը վերացնէ խումբը երկրէն երկինք, որոնք աստիճանական փառքը խաւար կոչեցին, վասնզի կ'ուղէին ոչ միշայն իրենք, այլև իրենցմով մեզ ալ մօտեցնել Աստուծոյ։

Հինգերը դարը մեր պատմութեան բովանդակ շըջանին մէջ, մեր ազգայնացման և վերակենդանութեան զարը եղաւ։ Խնչպէս բնութիւնը իր գարունը ունի որպէս սկիզբը և ծնունդը իր յաւերժացման, նոյնպէս ազգերը ունին իրենց մատազ սերունդները իրենց ցեղի տեւականացման։ Ե. դարու մեծ գէպքն էր որ պատճառը եղաւ մեր գոյութեանը յաւերժացման։ Աշխարհիկ փառքերը, զինուղօրութիւնները, և տիրապետութիւնները երաշխիք մը չեն ազգի մը տեւականացման, այս ամէնքը իրենց փորձը ցոյց տուած են պատմութեան փարագույրին վրայ, այլ ինչ որ ըստ Աւետարանի սի վերուստ գայ» նա է տեւականը։ Այսօրուան խումբին միտի ջանքը եղաւ, Աստուծած իջեցնել երկինքէն երկիր, և Հայերէն գիրով ու Հայ բարբառով խօսիլ Հայուն հետ։ Արդար չէ պարզ յիշատակութեամբ մը անցնիլ այսքան կարեոր դէպքի մը վրայէն։ Դարը յորում կ'ապրէին, ենթակայ ոչ միայն արտաքին, այլև ներքին թշնամիներու, աճեցնել մշտադաւալար բայսեր, Աստուծացին ակնարկած «Փոքր ածուռին մէջ, շատ զօրաւոր Հոգիներու անկ էր միայն։

Թարգմանիչները ըլլալով ամենէն աւելի Հոգեառ մարդիկ, ուզեցին որ իրենց Հոգին, որ մասնիկն էր Աստուծոյ Հոգին,

զայն միայն աւանդեն իրենցմէ վերջ զալիք սերունդին։ Վասնզի հոգեկան աշխարհէն իրենց ունեցած ծով փորձառութեամբը, որով գործած էին այդ ասպարեզգին մէջ, բոլոր ապրուած կեանքերէն աւելի օգտակար եղած էր, որուն չօշափելի արգիւնքներուն համար փոքրիկ կասկած մը խոկ չունեին։

Պատմութիւնը տեսած ու ապրած այս մարդոց հաւատքն էր սիմիկա։ Իրենց համար անխախտ վէմ մը եղած էր այն ամուր վստահութիւնը, որ կուգար ուղղակի Ա. Գիրքէն, որ ոչ միայն տառապող ժողովուրդի մը հոգեկան ապրումներու հաւատափացումն է ընդգէմ նիւթի փորձութեան, այլև հոն ուր կար այդ անընկճելի Ողին, տարուած բոլոր յաղթանակները ակներն էին։ Երբ կարգ մը յետամնաց ժողովուրդներու մօտ, ինչ ինչ առարկաներու կամ կենդանիներու հոգեկան զօրութիւնը, պաշտելութեան կապ մը եղած էր միայն համայնքի մը, կամ փոքրիկ խմբակի մը, միացնելով զանոնք բոլորը իրարու այդ առարկային շուրջը, և այն ալ կրնար փոփոխելի ըլլալ պարագաներու բերմամբ։ սիմիկա՝ սիսալ ու գեկանութեան մը ըմբռնումն էր, ու յաճախ ենթակայ կասկածանքի։ Ողիի մը յարատեայս փոփոխութիւն մէջ, չէր կրնար գոհացում գտնել մարդկային աւելի բարձր հոգին, որովհետեւ, հակառակ թափուած բոլոր ջանքերուն, անոնց իրարու հետ միանալու, զիրենք անկարելիութեան մը առնել կը դնէր։ պատճառը, այդ երկու ոգիներուն նոյնը չըլլալն էր։

Այլ էր ուրեմն Աստուծոյ մարդուն ներշնչած Հոգին, որ մեր թարգմանիչները փնտուցին և ջանացին յաւերժացնել, և որ կրնար մզիչ ուժը դառնալ իրապէս ապրող մարդկութեան, և զանոնք առաջնորդել զէպի հատարեալ Բարին։ Առ այդ Անմահ Հոգին էր որ մեզի իրը աւանդ ձգեցին։

Ա. Մեսրոպ, յլացողը և կերպաւորողը Հայ տառերուն, որոնց ձեերուն մէջ գեղեցկութիւնը փնտուելէ աւելի, հոգեկանութեանն էր որ կարեռութիւն տուաւ և ուահվիրան հանդիսացաւ։ Ա. Մեսրոպ քաջորված էր իր ժամանակին զոյսութիւն ունեցող լեզուները և բարձրագոյն գիտութիւնները, ծառայած էր պալատներու և

բանակներու մէջ, և տեղեկացած տիրապետութեան ոգիի սին փառքին, նատ յաճախ տեսած էր անոնց անկումը, նման այն հսկայ կաղնիին, որ այսօր կայ և վաղը ի հուր արկանելի: Որպէս զիւղացիի զաւակ, դիտած էր բուսականութեան կեանքը, և իր վարժ փորձառութեամբը տեսած էր թէ ամենագեղցիկ ծաղիկներն իսկ օրերու և կամ ամիսներու համրանք մը ունէին միւայն, բայց ինչ որ կը մնար անոնց մէջ, յաջորդ տարուան վերընձիւղելու վաստակութեամբ մը, այն ալ բոյսին մէջ ապրող հոգին էր, կենսանիւթը կամ սաղմը: Այս մտածումով միայն Ան մօտեցաւ մեր ժողովուրդի տեւականացման, պէտք էր մեռցընել անոնց մէջ ինչ որ վաղանցուկ էր, և պահել միայն ճշմարիտ Աստուծոյ առաջնորդող գերազոյն ձգտումը:

Ս. Եղիսեն, Աւարայրի դաշտին այդ դիւցազներգակ ոսկի գրիչը, հազար և երեսունըլից Նահատակաց արիւնին մէջ թաթիսեց իր եղէզը, և անով արձանագրեց Ռուկենիկ Մատեանի կարմիր էջերը: Կարմիրն Վարդանի և իրեններու արիւնաթաւթաւ դիւներու վրայէն կրցաւ այնքան վարժ կերպով սաւառնեցնի Անոնց մաքուր Հոգիները, որոնց պարտութեան մէջն էր տարուած յաղթանակին գեղեցկութիւնը:

Ցաղկերտի բանութիւնները և տեսակ տեսակ հալածանքները մեր ժողովուրդին վրայ, անկարող եղան չեղեցնել Հայը այն հաւատքէն որ չորս ու կէս գարերու արմատներով խորացած էր: Հայ ժողովուրդը թերեւս Պարսիկներէն աւելի փոփոխած ու փոխ առած էր իր աստուածները, Պատերազմի, Բարութեան, Խաղաղութեան, Գեղեցկութեան և Հիւրընկալութեան, և այս բոլորին մատուցած էր պաշտամունք և նոյնիսկ մարդկային զոհեր, բայց անոնք ամէնքն ալ չկրցան գոհացում տալ իր Հոգին: Փորձով տեսած և հասկցած էին անոնց անկարողութիւնները, վասնզի ժամանակաւոր էին միայն, և չէին կրնար ապրիլ իրենց ներսը եղող Անմահ Հոգիներուն հետ: Կրակի և Արեկի պաշտամունքը անոնցմէ վեր չէին կրնար ըլլալ, դիտուած էր թէ, մեզի շատ սովորական դարձած ջուրն ու ամպը, կը մարէին մին՝ ու կը խաւարեցնէին միւսը. հետեւաբար պէտք

էր փնտուել Այն որ Տէրն էր այս երկուքին և ամենուն:

Երկիրներ գրաւելու և մարդոց տիրանալու բազմաթիւ կոիւներ շատ մզած էր մեր ժողովուրդը, որոնց չքեղ նկարագրութիւնները կը մեային պահուած արքունի դիւաններուն մէջ: Այդ ոգին, փոչիացաւ իրեն յատուկ վաղանցիկ փառքի մը պարապակարութեամբ մը:

Ս. Դաւիթ - Անյաղը, օտար ուսմանց ներկայացուցիչը մեր մէջ, որպէս Քրիստոնէացած փիլիսոփայութեան մը ախոյիանը: Ան կը գիւղագրաւէ նոյնիսկ իրմէ առաջ և իր ժամանակի բոլոր մտածողները, որոնք կապած էին իմաստութեան ժապաւելնը իրենց ճակտին, և գափինին իրենց զիլիին, և անհանդուրժելի ամբարտաւանութեամբ մը կ'արհամարէին աշխարհն ու գիտութիւնը միանգամայն: Հարկ չկայ բաղգատականը ընելու գործին ու գործաւորին, որուն միջավայրին այնքան դառն գժուարութիւնները, «հզօրագոյն են քան զառիւծունու և թիթեաթուիչս քան զարծուիս»: Պարզ պատահունք մը չէ որ «անյաղթ» տիտղոսը փակցուած է իր անունին, և ոչ ալ փայտականք մը իր գժուարին զիտութեանց համար, որոնց հետքերէն քալեց ան, այնքան արժանավայել ընթացքով մը: Շատ անգամ անթեղուած կայծ մը հրդեհի մը ուժգնութիւնը ի յայտ կը բերէ, և երբեմ բոցավառ խարոյկները կ'անհանան օդին մէջ ոչինչ արգիւնքով: Ու Դաւիթ - Անյաղթը մէկն էր այդ անթեղուած կայծելն:

Ս. Մովսէս Խորենացին, որ եթէ մեր գարու քննադատութեան ժայակին ալ զարնեն քննադատները մեր առաջին պատմիչը, ան կը մնայ միշտ իր պատուանդանին բարձրութեանը վրայ, որպէս մութծովերուն մէջ լուսատու փարոս մը, նման իր անուանակցին, Մովսէս մարգարէին, որ իսրայէլի ժողովուրդի պատմութիւնը աւելի նուիրականացնելու և անոր տալու համար գերազոյն ծագում մը, կապեց զայն Աստուծոյ ստեղծագործող Աշխին: Եթէ Բարելունացիներուն քով պաշտելի էին իրենց նուիրական Տախտակները, որոնց մէջ նկարագրուած են իրենց կրօնական պատ-

րազմերը և ստեղծագործութիւնները, օրէնքներն ու պաշտամունքի արարողութիւնները, և Զինացիներուն զասական և կրօնական գիրքերը, բանաստեղծութիւններն ու երգերը, և Կոյսերու պատղամեերը, եղիսաբետացիներուն Մեսելոց Գիրքը, և տակաւին ուրիշ կարգ մը կրօնքներու գիրքերը, Վէտան, Զէնտավէստան և Թրիբթաքան, որոնցմէ իւրաքանչիւրը կը պատմէ իր ցեղին ծագումը, սովորութիւնները և ժողովուրզի հենցաղը, և կրօնական արարողութիւնները, Խորենացին այս մտածումով իր պատմութեամբ կուտայ մեր ժողովուրզի ծագումը, երգերն ու կրօնական արարողութիւնները մտամբ մը, և մեր անցնող փառքերու և նշանաւոր հոգիներու ապրումները, որոնք որքան աւանդական խոկ սեպուխն հին և ներկայ ժամանակներու մէջ, մեզի դարձեալ բան մը կը մնայ անկէ:

Ա. Գրիգոր Նարեկացին, Հայ Հոգին ամենէն պայծառ ու մաքուր փառքերէն մին: Սուրբ մը և հանճար մը միանգամայն: Քոլորովին տարբեր է Նարեկացին միւսներէն, Աստուածախօս մատնագիր մը, որ ինքզինքը այրած է Աստուածոյ քուրացին մէջ, կիզուելու և ճնճներելու Միածնի փառքին իրեւ Ժիացող խանձող մը: Ժամանակով և միջավայրով չեն պայմանաւորուիր Նարեկացին նման մեծ հոգիները, այլ Աստուածոյ մէկ պարգեր: որ քիչ անդամ կը ցողուի այս մոլորակին վրայ: Մենք քիչերէն ենք այն շատերուն քով, որ արժանացած ենք այս պարգեւին: Շատ մը գիտութիւններու տիրանալը զօրաւոր կամքի և սուր մտքի գործ է, բայց Աղօթքի Մարդ ըլլալը, զօրաւոր հոգեկանութիւն մը ունեցողի գործ է: Նարեկացին վերացած է այս երկրէն և իր բնակութիւնը հաստատած Հոգեկան աշխարհին մէջ, ու իր խօսակիցները եղած են Միածին Որդին և Աստուածամայրը: իր սա խօսքը՝ «Ահա կաթիլ մի կաթին քուսդ կուսութեան յանձն իմ անձրևեալ կենացը ինձ զօրէ», ցոյց կուտայ թէ երկինքէն է որ կուգայ իր կեանքին զօրութիւնը, և ինչ որ երկինքէն կ'իջնէ հզօրագոյնն է մարդոց ունեցած զօրութիւններէն:

իր Նարեկը որ միակն է թէ իրրե ա-

զօթքի գիրք, և թէ իրրե մաքուր Հոգիէ մը բղխած արտայայտութիւն, ցարդ գրուած բոլոր հոգեսոր զրականութեանց մէջ, միստիկ առինքնողութիւն մը ունի մեղքով ճնշուած հոգիներուն վրայ: Անոր աղքիւրը Ա. Գիրքն է ամբողջութեամբ, ու ինքը Սուրբ Գիրք մը դարձած է հաւատատոր ժողովուրզի աղօթող հոգիներուն համար: Իրմէ վերջ երկարող հաղար տարին՝ անշարող եղաւ չիղ մը խոկ պակսեցնել անոր զօրաւոր Հոգեկանութիւնէն: Աւետարանով ու Նարեկով Հոգեպէս սնած մեր ժողովուրզը, զեռ գարե՞ր, գարեր պիտի ծծէ հոգեսոր կաթը այս Գիրքերէն, երբ ամէն օր իրենց ձեռքին մէջ ու սնարին մօտիկը ունին այդ երկուքը քով քովի:

Ա. Ներսէս Շնորհալին, վերջինը այս հոյլին, և երգիչ սսխակը Հայ Շարականին: Անունէն խոկ կ'երեւի նուիրականութիւնը իր փառքին: Քահանայապետական տոհմէ էր, և ամենէն աւելի պատկառելի ու սիրելի, իր օրերու մարդոց: Շնորհալին բանաստեղծ ու երաժիշտ էր միանգամայն: իր հոգեկմայլ երգերովն ու շարականներովը, զուարթ ու չէն է Հայց. Ա. Եկեղեցին:

Շնորհալին, նախանձախնդիր պահակն է Հայ Եկեղեցիի աւանդութեանց, կարգ ու կանոններուն: իր հզօր գրիչը սուրբ նման կ'ուզզէ բոլոր անոնց դէմ, որոնք կը փորձեն մտնել անոր անդաստաններէն ներսը և աղարտել մեր Եկեղեցւոյ հաւատքն ու վարդապետութիւնները: Ընդհանրական հոգին ցոլացումն է, և հայելին Հայց. Առաք. Ա. Եկեղեցւոյ, զաւանաբանական խնդիրներու և կանոններուն, ուր կ'ըմբերանուին իր ժամանակի հականառողներուն վոհմակիները:

Թէև զարերու անջրպետով մը զատուած իր երէց եղբայր Թարգմանիչներէն, սակայն այն Հոգեկան զօրութիւնը որ Անոնցն էր անխարդախնութիւնը մը կապեց Շնորհալին այդ փաղանգին:

Շնորհալի մակդիրը որ տուած է իրեն ժողովուրզը, աժան տուրք մը չէ յումպէտո վատնուած: Ժողովուրզը շատ ժլատ է իր այսօրինակ բաշխումներուն մէջ, մասնաւանդ Շնորհքի խնդիրներուն, և այս կուգայ գարեր չարունակ մեզի, աւելի եւս

գերազանցեալ շքեղանքով մը, որ իր արժանիքին մէկ իրական ցոլացումն է:

* * *

Տասնեւհինգ դարեր վերջ կեցած ենք գէմ յանդիման այն խումբին, որոնց բարիքները վայելող երախտաւորեալներն ենք: Աննիւթական բարերարներն են անոնք մեր ազգին, որոնց տալու Ազին դարերու ընդմէջէն անցաւ մեր ժողովուրդի սիրտին, և անոնք՝ արիւնին մէջ: Մեզմէ իւրաքանչիւրը կը ջանայ հետեւելու մեր անմահ թարգմանիչներու տալու և նուիրելու գերագոյն օրինակին, առանց սակարեկելու իր պայմանները, միակ նպատակը ունենալով ամոքել մեր ժողովուրդին վիշտը, ի դէպ իր կարիքներուն:

Տարիներէ ի վեր գեղեցիկ զուգաղիպութեամբ մը, Թարգմանչաց այս տօնին օրը, կը յիշատակուին Ս. Աթոռոյս Մեծ Բարերարին Վասեմ. Գալուստ Կիւլպէնկեանի ծնողքը Սարգիսն ու Տիրուհին, և համայն Կիւլպէնկեան Ազնուական Գերգառոտանի ննջեցեալները, ի ժամ Ս. Պատարագի և հոգեհանգստի: Միեւնոյն մտածումէն է որ տարուած է Ս. Աթոռոյս Մեծ Բարերարը, ժառանգելով իր նախահայրերէն և բարի ծնողքէն, տալու ազնիւ առաքինութիւնը: «Երանի որ ունիցի զւակ, ի Սիռն» կ'ըսէ սրբազն յատենագիրը: Մտքի և հոգեկան արժէքներու մեկենաս ըլլալը հազորդ ու բաժնեկից ըլլալ է Ս. Թարգմանչաց օգիին: Ս. Յակոբեանց այս դարաւոր ժառանգութիւնը եթէ կրցած է ապրիլ ու բարգաւաճիւ դարերու ընդմէջէն ատիկա շնորհիւ իր բարերարներուն է, երբեմն մտքի և յաճախ նիւթի օժանդակներուն:

Հայը միշտ պարձանքով յիշած է իր

մեծ նուիրատուները: Մեր ժողովուրդի հոգեկան արժէքներու գոյութիւնն ու տեւականացումը արգասիքն է այս բարերարութեանց: Մեր ժողովուրդը շատ բան կը պարտի բախտէն նպաստաւորուած իր զաւակներուն իր մտքի և հոգիի մեծ մեկեանասներուն: Այդ կարգի իշխանական նուիրաբերութիւն մըն է Ս. Աթոռոյս Կիւլպէնկեան Մատենադարանը շինուած ի յիշատակ երջանիկ ծնողներու, որ իր մէջ տաղաւարելու սահմանուած է կրօնի, կրթութեան և գրականութեանց, եղակի սրբութեամբ նուիրագործուած գանձերը: Կիւլպէնկեան Տան ձեռներէց և տոհմասէր օգիին բացառիկ մէկ յայտնութիւնն է Ազնուամեծար Տիար Գալուստ Կիւլպէնկեանը, որ միջազգային համբաւ մըն է այլես և ազգային բարերար մը՝ որ գիտէ գիմաւորել իր ժողովուրդին պէտքերը կիրթ և ազնուական զգացումներու և դատումի մը մէջէն:

Բարերարներու նպատակը նոյն եղած է դարերէ ի վեր, Քրիստոնէական մաքուր ըմբռնումովը պահել Ազգն ու Եկեղեցին, և անոնցմով յաւերժագինել և գործնականացնել առաքելական այն խօսքը թէ ուտ է տալն քան զառնուելն»:

Եւ մեր փառաւորումը կ'երթայ ոչ թէ կատարուած գործերուն մեծութեանը, այլ այն հզօր Հոգիին, որ դրած են իրենց գործերուն մէջ, տալու այս ժողովուրդին եւ Եկեղեցին, իրեւ միակ ազգակը Անոնց տեականացման: «Հոգին է կենդանարարը» կ'ըսէ Աւետարանը, եւ այդ կենդանարար Հոգին է որ կ'երեւի մեր այսօրուան տօնելի Թարգմանիչներուն մէջ, և այդ Հոգիով միայն կարելի է հասնիլ այն Գերագոյն Յարութեանը, Աստուծոյ, Որուն Փառքին համար ամէնքս ալ «անպիտան մշակներ» եղած ենք դարերէ ի վեր:

ՀԱՅԿԱԶՈՒՆ ՎՐԴ. ԱԲՐՍՀԱՄԵԱՆ

Վ Ա Ր Դ Ա Ն Ի Ս Ի Ր Տ Ը

4

Ան շան օրեր ու սարիներ,
Աթրեմն կրակ, յահախ մոխիր,
պար պարմաներն Մամիկոնեան,
Անքեան ճամքէն կը գնէին
Ճնշազն իրենց:

Ա րեն աղուոր յաղթանակի
Արձ արինի,
Մշր մահուան դէմ
Ամփառուրբն կը կենային
Կիւսպետները այդ գարերուն,
Ծովուծերն իրենց ըրած պատուա
Ռիւայրենիին, ազատութեան:
Ա ռաջնան

Ա նանցան օրեր ու սարիներ,
Իին բեւաչուի խոլ պարմանին
Ոն ռած մազերն իր ուսերուն,
Համասկերուն պէս մեր արտերուն
Եւթեւամոյն,
Աթնակն որուն.

Ա զնոգիներուն մէջ կը կարէր
Պղնողն իր մահուր,
Ա մուսինն ինչպէս
Էրեւորն անտառին ըսուերագող:

Ա ն Ջյն օրերուն,
Կիվսկի դոնէն պատանութեան,
Ա ն Ան կը սանէր
Եւերմերն իրեն անշամանդադ,
Ա պցթոցն լեռներուն ճայրենական,
Ա ռութորն անտառին,
Եփիթիւնելին դէմ մեր ջուրերուն,
Մ մ Մակներուն եւ դաւաւուն,
Երս Երազելով,
Ա ն Անուսութիւնն ազատութեան,
Կի Կիրքն անկառա հոգիներուն,

Մուրհակն որուն
Կը գրուի լոկ
Մեր արինուլ:

Օրեն իրեն,
Պայծառ խոսում,
Ուխս արինոս,
Խորանին դէմ մեր սարերուն,
Որոնք դրած զլոխն իրենց
Կապոյս բարձին երկինքներու,
Կ'երազէին
Խոկն անանուն գալիքներուն:

Ո ւ կը ժալէր,
Պարմանն աղուոր,
Փառերուն դէմ այս լուռ ու մունչ,
Որոնց ծոցին՝ մինչեւ երէկ,
Կը հնչէր խոլ, զուարթազին,
Երգն աղամանդ,
Ս.նդէռդին ու հովիսին,
Ռիքմուն անոււ ազատութեան:

Ո ւ կը ժալէր,
Խոլ պարմանին,
Մ տածումին մէջ արինոս
Խնկող թագին ու բագերուն,
Ժողովուրդին մեր գարաւոր,
Օտարներու ոտին կոխան:

Շուն է կարմիր
Եղբաներուն,
Եւ խոկն այրող հողին զերի,
Մ եռելներուն եւ ողջերուն
Համար բոլոր:

*

Երեն կը բուէր բացուող շիրիմներ
Չեռքէ մը կախարդ,
Խեխաններ հազար ձիերով ճերմակ,
Ճեռուն ցայզին մէջ
Կ'երքան բոլէ բոլ,
Թափօրն անցեալին, Վաչէէն Մուսեղ,
Անոնց՝ որ կ'ապրին
Դեռ մահէն անդին :

Ու իր աչքին դէմ,
Տեսիլք մը ինչպէս զատուած մըուէն,
Կը կանգնին նորէն
Բանակներն հօր աշխարհին հայոց,
Ու զլուխն անոնց
Պայազաններ սուրբ
Տանն Մամիկոնեան :

Կարծես կը հնչէն իր ականջներուն,
Դարերէն անհուն
Չայնը փողերուն,
Նոինը ռազմին,
Տրոփն երկրաշարժ երիվարներուն :

Ու բանակին դէմ,
Թուխ ամպ մը ինչպէս,
Չերք սիւն հրեղէն
Առաջնորդն անոնց,
Մոլեզին ինչպէս կորիւն մ'առիւծի,
Իր յովատակին վրայ աննուան,
Խմելով ցյազ
Յաղթանակներու
Գինին արփառող :

Օրեր լուսաւոր,
Երք Այրարատէն
Մինչեւ ծովն նեռուն,
Ծովն արեւմտեան,
Դրօս մը ինչպէս կը ծփար անունն
Բանակներուն հայ,
Յաղթողներուն զոռ :

Զկան այժմ անոնք,
Ս.ստղերն իրենց լոկ
Կը փայլին դեռ վեր
Կանքեղներն ինչպէս
Իր մեծ պապերու
Հաւատքին անմեռ :

Զկան այժմ անոնք,
Բայց երազն իրենց
Չերք դրօս կարմիր
Կը ծփայ անվերջ
Հայ ըղձանեցներու
Բոցերուն վերեւ :


*

Ու կը բալէր,
Պարմանն աղուոր,
Ամպին ներին
Ուկեփոսի անցեալներուն,
Ցուցերուն նես անոնց բոլոր,
Որոնք անցան այս աշխարհէն,
Թողլով իրենց սուսերն ու զան
Տկարներուն իրենց ժառանգ :

Ու կը կրծեն
Կասկածներ սուր,
Խեթեր ուժգին, իր նէլ նոզին,
Թէ անցած են օրերն արդիօֆ
Յաղթանակի եւ մեծութեան :

Ու կը բալէր,
Պարմանն աղուոր,
Հոզին ըրած հազարերանգ
Ծիածան նոր,
Անցեալ, ներկան,
Իրար զօդող :

ԵՂԻՎՈՐԻ



Դրանս առջին, կը հեծկլսայ ձայն մ'ինձ ծանօք,
Սիրս այս գիշեր բաց է բոլոր եկուորներուն,
Մեկնող բոլոր իմ սէրերուն անշամանդաղ,
Որոնց համար ես դառնօրէն յանախ կուլամ:

Կը յամառի զարկը մատին սրտիս վլրայ,
Մուր գիշերին, ո՞վ է եկուորն այս տարածամ,
Հէֆեարներու աշխարհներէն եկած բռչո՞ւն
Թէ անցիալի յուշկապարիկն իմ սէրերուն:

Կապոյս բռչուն, բայց դուն ուրկէ*, բայց դուն ի՞նչպէս...
Ո՞ւս գիշերին, մո՞ւր գիշերին, անակնկալ
Ինձ կը բերես անմեղութիւնն անցեալներուն
Զոր կորուսի առուծախին մէջ օրերու:

Կրակ լեզուով ինչպէս պատմեմ կեանիս ժեզի,
Ըստանիով ու մեղերով այնքան լեցուն,
Թոյիր զընա՛ նին օրերու անմեղութիւն,
Ու բող ինձի հետանին անհուն կոտտանիներուն:

Անցեալին նետ ի՞նչպէս նաևուիլ կրնայ ներկան...

ԶՈՒԵՆ Ա. 2.



ՀԻՆ ԷՐԵԲ

ԲԱՆ ՊԻՏԱՆԻ

Հետեւեալ տաղին բաւական տարեր մեկ փոփոխակը, «Մանանայ» հաւանակած է Կ. Կուսանեանց, 1892ին. «Ի Վերաց Մանուան» վերնագրով։ Մեր ձեռագրաւանի թ-1900 ժողովածուն, Թղթուրանցիի շարք մը տաղերու կարգին (հջ 137) ունի սյն տաղը ևս զոր աւելորդ չին համարիր հրատակի «Միոն»ի մեջ, նկատի ունենալով անոր պարունակարագմարիւ եւ ուշագրաւ տարերութիւնները։

Քանի դատիս ի հետ մեղաց,
Ե անզգամ մարդ կատարած,
Զանչափ չարիքդ որ գործեցիր,
Հերիք արայ դարձ ի մեղաց։

Տես ու լսէ խրատու գրոց,
Մեղաւորացն ինչ կա պահած,
Սրդարոցն արթայութիւն,
Փառք ու պատիւ յորդայխաղաց։

Բեր ու ծըզէ զահն ի մըտիդ,
Դու էլ զիտես ինչ կա պահած,
յնդամայ մինչեւ այսօր,
Շունչ կենդանի զոք չէ թողած։

Էտ որ ունէր բերդ ու քաղաք,
Դարպաս ունէր ոսկով ծեփած,
Նայ մընացեր ամէն թերմաշ,
Ինքն է իշեր գուք մի փորած։

Էտ որ հեծնէր ծի բարձրավիզ,
Ու թուր ածէր ամէն դիմաց,
Յետոյ եղեւ խիստ փոշիման,
Յերկու փետի մէջ պառիկած։

Էտ որ խըմէր զանուշ զինին,
Զինքն բըտէր քան զխոզ ուռած,
Նա եղեւ խիստ ատելի,
Զինչ անպիտան գէշ մը ծըզած։

Շատ մի կտրիճ մուրայգալի,
Կամ թէ լինէր մուրուքն էկած,
Տեսայ զէն զեղեցիկ սուրաթն,
Ի հետ հողուն էր շաղըզած։

Շատ աղջըներ զեղեցկածամ,
Ուրենց վարսերն օրինած,
Հազնին հանդերծ ոսկի թելով,
Զինչ զարեգակն բոլորած։

Տես թ'ինչ եղան յանկարծակի,
Ոնտաշ ւ անկոփի փայտ մի ծըզած,
Ուրենց մահուն օրն ատելի,
Ուրենքն ամէն սրտի սիրած։

Դեռ այդ յետին համարն չի,
Յետին համարն է կատարած,
Յորդամ ծագի խաչն ի յերկնից,
Նստի Քրիստոս յաթոռ փառաց։

Սրդարոցն տայ պսակ,
Որ հըզնեցան կացին ի լաց,
Մեղաւորաց զհուրն անշէջ,
Հզտարտարոս գուրն որդանց։

Խեւ Յովանես Թղթուրանցի,
Զնոգոյ մըտաց աչերդ բաց,
Ուղիղ սրտով խոստովանիր,
Ի ապաշխարէ եւ կաց ի լաց։

Հրան. Ն. ԵՊԱ. ԾՈՎԱԿԱՆ

ԳԵՂԵՐՈՐԴ ՍԻՒՆԱԿ

ԱՐԵՎԱՐԱՐԱԿԱՆԱՍԱՐԴՈՆԻ ՀԱՏՈՒԱԾԱԿՈՂՄԸ

ՏԱՐԱԾԵԿԵՐՈՐԴ ՏԱԽՏԱԿ

55. Պա՛ալու⁽¹⁰⁵⁾ Տիւրոսի թագաւորը, թանասոէ⁽¹⁰⁶⁾ Յուղայի թագաւորը, 56. Խառշկապրի⁽¹⁰⁷⁾ Եղազմի⁽¹⁰⁸⁾ թագաւորը, Թացուրի⁽¹⁰⁹⁾ Մովարի⁽¹¹⁰⁾ թագաւորը, 57. Ցլ-Պէլ⁽¹¹¹⁾ Գաղայի⁽¹¹²⁾ թագաւորը, Մելինի Ասկաղոնի⁽¹¹³⁾ թագաւորը, 58. Իգառուու⁽¹¹⁴⁾ Ակարոնի⁽¹¹⁵⁾ թագաւորը, 59. Միլգիաշարայ⁽¹¹⁶⁾ Կէպալի⁽¹¹⁷⁾ թագաւորը, 60. Մաթանպա՛ալ⁽¹¹⁸⁾ Արլատի⁽¹¹⁹⁾ թագաւորը, 61. Ապիպա՛ալի⁽¹²⁰⁾ Ասմիրմուռնայի⁽¹²¹⁾ թագաւորը, 62. Բուտուիլ⁽¹²²⁾ Պէք-Ա. Անովիլ⁽¹²³⁾ թագաւորը, Ասիմիլչի⁽¹²⁴⁾ Ասեղովթի⁽¹²⁵⁾ թագաւորը, 63. առաներկու ծովեղբայ թագաւորներ: Եղիշթուրայ⁽¹²⁶⁾ 64. Իտալիոնի⁽¹²⁷⁾ թագաւորը, Բիլակուրայ⁽¹²⁸⁾ Խիզբուսի⁽¹²⁹⁾ թագաւորը, 65. Գիսու⁽¹³⁰⁾ Սիլուայի⁽¹³¹⁾ թագաւորը, 66. Իթուանտար⁽¹³²⁾ Բաֆօսի⁽¹³³⁾ թագաւորը, 67. Երիու⁽¹³⁴⁾ Խոլիի⁽¹³⁵⁾ թագաւորը, Տամասու⁽¹³⁶⁾ Գուրիումի⁽¹³⁷⁾ թագաւորը, 68. Աթմէսու⁽¹³⁸⁾ Թամէսի⁽¹³⁹⁾ թագաւորը, 69. Տամուսի⁽¹⁴⁰⁾ Գարթիխտասաթայի⁽¹⁴¹⁾ թագաւորը, 70. Աւնասակուսու⁽¹⁴²⁾ Լետրայի⁽¹⁴³⁾ թագաւորը, 71. Պուցուսու⁽¹⁴⁴⁾ Նուրիայի⁽¹⁴⁵⁾ թագաւորը, տասը թագաւորներ Եաթնանայի⁽¹⁴⁶⁾, 72. ծովու մէջտեղէն, գումարը՝ քսաներկու թագաւորներ Հիթիթի, ծովեղբի, 73. և ծովու մէջտեղի՝ անոնց բոլորը դրկեցի, և 74. մեծ գերաններ, բարձր սիւներ, նուրը տախտակներ՝ 75. մայրիի նոճի՛ արտապրութիւնը Սիրաբայի և Լիբանայի⁽¹⁴⁷⁾, 76. որոնց հասակը՝ հինէն ի վիր, աճած և ուռճացած էր: 77. Թեաւոր⁽¹⁴⁸⁾ ցուլեր և անդրիներ⁽¹⁴⁹⁾ սուտակէ⁽¹⁵⁰⁾. 78. էկ անդրիներ, յաղթ կովեր (անդրի), շէմեր, այրուած աղիւս, 79. մարմարէ, սուտակէ, գունաւոր մարմարէ⁽¹⁵¹⁾. 80. Պրէսսիայ⁽¹⁵²⁾, գեղնկեկ կրաքար⁽¹⁵³⁾, պտղաձեւ-կրաքար⁽¹⁵⁴⁾ 81. Եռներէն, իրենց գոյացման փայրէն, 82. հարկին համար պալատիս, գժուարութեամբ և նեղութեամբ,

1. գէպի նինուէ՝ տէրութեանս քաշքը քաշկոտեցին: 2. Նպաստաւոր ամիս մը, բարեբաստիկ օրերուն, այս դարատափին վրայ, 3. մեծ պալատներ՝ տէրութեանս բնակութեան համար, 4. անոր վրայ կառուցի: 5. Թագաւորին առնել՝ իննուռնինդ մեծ կանգուն երկարութեամբ, (եւ) երեսունմէկ մեծ կանգուն լայնութեամբ, 6. զոր, թագաւորներուն՝ հայրերուս միջն, ոչ մէկն էր կանգնած, ևս չփնեցի. 7. մարմարեայ սալաքարերով՝ պատեցի իր միջնորմը, և 8. մայրիի մեծ զերաններ՝ տարածեցի անոր վրայ. 9. պալատ մը՝ ճերմակ կրաքարէ, և պալատներ՝ վիզուկրէ՝ 10. գգքիէ, տօսախնէ, թթենիէ, մայրիէ, նոճիէ, 11. թագաւորութեանս բնակութեան, և վայելքին համար՝ տէրութեանս,

ՏԱՐԱԾԵԿԵՐՈՐԴ ՏԱԽՏԱԿ

12. կառուցի գեղարուեստականօրէն, և մեծ զերաններ մայրիի տարածեցի անոր վրայ. 13. գաներ՝ նոճիէ, որոնց բոլը հաճելի է, պատեանով (մը) արծաթեայ, 14. և պղնձեայ՝ պատեցի, և ամրացուցի անոնց դոնիը: 15. Ցուլեր՝ թեաւոր, անդրիներ, յաղթ կովեր՝ (անդրի) սեաճուկէ, 16. որոնց կուրծքերը, ինչպէս որ զետեղուած են, չարիքը կը գանհն: 17. Մեծ ցուլեր՝ թեաւոր, անդրիներ, առիւծներ, դէմ յանդիման իրարու, 18. իրենց աճման լրումին (հասած) կով-անդրիներ, թեաւոր կովեր՝ երկուորեակ, 19. փայլուն պղնձէ՝ ձեաւորեցի, 20. և ցուլեր՝ թեաւոր, անդրիներ՝ սպիտակ կրաքարէ, 21. անոնց մուտքը, աջ և ձախ՝ պահպանել տուի: 22. Մեծ սիւներ՝ պղնձեայ, հոկայական սիւներ՝ մայրիի, 23. տախտակներ, բարաւորները՝ իրենց զոներուն, զետեղեցի շուրջը այդ պալատին: 24. քիւ մը շինեցի, և լազուարթներկէ, և կարմիր կաւահողէ՝ առիւք մը, և 25. լայն կամարագոտիով և ծնոտով մը՝ ծաղկաբորի մը պէս, զայն ըրջապատեցի. 26. բոլոր գաները՝ պատեցի ծիածանի մը պէս. 27. կղպանքներ՝ արծաթէ, սոկիէ, և փայլուն պղնձէ՝ անոնց մէջ ամրացուցի: 28. Աշուրին՝ ալիոջուզօրութիւնը, (եւ) արարքները՝ զորս գործած էի, թշնամի երկրներուն մէջ, 29. աշխատանքովը քան-

գակագործին՝ անոր մէջ քանդակեցի: 30.
Ամանոսի(155) նման՝ մեծ զարաստան մը,
որ անուշահոտ ծառերով, 31. և պտուղնե-
րով ճոխ է, անոր կողմբրը տնկեցի: 32.
Անոր բացատները՝ ընդարձակեցի մեծապէս,
և անոր ճամբաները՝ ընդարձակօրէն 33.
լայնցուցի: իբր գուռ՝ հոն գտնուող ձիհրու,
34. հաստատեցի ջրորդան մը, և հոսանքի
մը հանգոյն՝ զայն հեղել տուի...: 35. Այդ
տաճարը՝ իր հիմքն մինչև ձեղունը, 36.
կառուցանեցի, աւարտեցի, և լեցուցի ա-
ռատութեամբ. 37. օդիով (արմաւի) մաք-
րըւեցաւ, անոր ծիփը. անոր շտեմարանը,
զինիով սրսկուեցաւ: 38. Ան որ կը շար-
ժէր բահը, մարկելը, ազիւսի կաղապարը,
ան որ աշխատանք կ'ընէր, 39. ան որ կու-
րը կը կրէր, բերկրանքով, ցնծութեամբ,
հաճոյքով, 40. գոհունակ գէմքով, (վեր-
ջաւորութեան) կը բերէին, իրենց օրերը:
41. Անոր աշխատանքը, ցնծութեամբ,
հրճուանքով, երգով, (և) չքեղութեամբ
42. վերջացուցի, և աէն. ԿՈԼ. ՇԽԾ. ՏՈՒ.
ՏՈՒ. Ա. 43. «ամէն ինչ հայթայթող պա-
լատ» կոչեցի անոր անունը: 44. Աշուր,
Պէտ, Նապու, Իշթարը Եինուէի, Իշթարը
Արպէլայի, 45. աստուածները Ասորեստա-
նի, անոր մէջ հրաւելրեցի բոլորը, և 46.
անոնց առջե, փառաւոր, մաքուր՝ զոհեր
մատուցանեցի, և 47. իմ պարզեները նը-
ւիրեցի: Այդ աստուածները՝ 48. հաստա-
տակամութեանը մէջ իրենց սրտերուն, իմ
թագաւորութիւնը օրհնեցին: 49. Ազնուա-
կանները՝ և հառարակ ժաղովուրդը երկրիս,
անոնց բոլորը՝ 50. համեղաճաշակ կերա-
կուրներու, խնճոյքի, և կոչունքի սեղանի
մը, 51. զանոնք բազմել տուի, և անոնց
ախորժակները գոհացուցի:

ՏԱՐԵԿԵՐՊՈՐԴ ՏԱԽՏԱԿ

52. Զովացուցի անոնց սրտերը՝ գինիով
և օղիով (արմաւի), 53. անոնց գլուխնե-
րուն վրայ՝ լաւագոյն իւղ՝ առատ իւղ,
հեղեցի, 54. Աստուածներու թագաւոր՝
Աշուրի հրամանով, և բոլոր աստուածնե-
րուն Ասորեստանի, 55. ուրախութեամբ,
երջանկութեամբ, հոգեկան զուարթու-
թեամբ, 56. առատ սերունդով, հոն երկա-
րօրէն, 57. բնակի՛մ, և անոր չքեղութիւնը՝
վայելե՛մ: 58. Եոր տարուայ տօնին, առա-
ջին ամսուն, բոլոր երիվալները, 59. զո-

բիները, ուղտերը, զէնքերը, պատերազմի կազմածքը, 60. բոլոր բանակներուն, թշնամիին աւարը, ամէն տարի, 61. անդագրուն կերպով, մթերեմ անոր մէջ, 62. Ան որ է այս պալատին մէջ, (Ըլլայ ան) բարերար ոգի մը, բարեգործ ոգի մը, 63. թագաւորութեանս քայլերը հսկելով, հօգիս զուարթացնելով, 64. սերունդներ շարունակ՝ թող բարգաւաճի՛, (և) անոր քովէն չի պակսի: 65. Գալիք օրերուն, թագաւորներուն՝ որդիներուս միշն, 66. (ան) որուն անունը, Աշուր և Իշթար, երկրին և ժողովուրդին՝ իշխանութեան համար 67. պիտի հռչակեն, երբ այս պալատը, 68. պիտի հիննայ, և փճանայ, անոր աւերակները՝ թող վերականգնէ՛ ան: 69. ինչպէս որ ես, թագաւորին՝ զիս ծնանող հօր՝ անուան գրութեան⁽¹⁵⁶⁾ արձանագրութիւնը, 70. իմ (իսկ) անուանս գրութեան՝ արձանագրութեան երկայնքին, զետեղած եմ, և 71. գուն (ըրէ) ինձի նորան. անուանս գրութեան արձանագրութիւնը՝ 72. զիտէ, և իւղով օձէ զայն, մատուցանէ զոհեր, 73. (և զայն) քու անուան գրութեան արձանագրութեան հետ, զետեղէ: 74. Քու աղօթքները, պիտի լսեն Աշուր և Իշթար: 75. (Թուականը) Ստար (ամսոյն). անուանագիրը, Աթար-իշի՛ հառաժարին լահիոնափ

• 0 0 1

105. *Պա'ալու՝ աքքատ.* ամէԲա-լս, փիւնիկեան ծագումով անուն մըն է՝ **Եղանակ**, Աշուրպանիբալի ըրջանին ալ զործ ածուած։ Revue Biblique, 1911, էջ 120.

107. **Գառւշկապրի**, **աքքատ**. amēl Qa-ush
-gabri, **ԿՈ-Շ-ԳԵՐ**, **ուր եգովմական** «**ԿՈ-Հ**
աստուծոյ անունը կ'երեի», **ինչպէս** Qa-ush
-ma-la-ka, **բառին մէջ**, **թաղղաթ-**

իսպար գ.ի շրջանին: Revue Biblique, 1911, էջ 211.

108. Եղովմ՝ աքքատ. անU-du-me, Աւ-կար. Udm, Եղիպտ. բնագիրներու 'A-du-m(a)h, անս Max Müller, Asien und Europa, nach Altägyptischen Denkmälern, Leipzig, 1893, էջ 135; Max Burchardt, Die alkaanäischen Fremdwörter und Eigennamen im Aegyptischen, Leipzig, 1909, Zweiter Teil, թիւ 196; W. Foxwell Albright, The Vocalization of the Egyptian Syllabic Orthography, New Haven, Connecticut, 1934, էջ 34; Henri Gauthier, Dictionnaire des Noms Geographiques contenus dans les Textes Hiéroglyphiques, Le Caire, 1931, tome premier, էջ 126; Եղովմ Հին Կտակարանի մէջ նաև լիշտակուած: Երեմ. 49, 17; Եղեկ. 25, 12; Մազ. 1, 4; Դան. 11, 41: מְוֹדָא LXX Էծօր, Ասոր. Քօն, Վուկ. Edom, Զօհր. Եղովմ, Ղպտ. էծօր, Էծօր. אֶדוֹם, կարմիր ծովու elanitic ծոցին և Մեռեալ ծովու միջն գտնուու լեռնային տարածութիւնն է՝ Եղովմը:

109. Մուցուրի՝ աքքատ. Mu-sur-i «Եղիպտացի» կը նշանակէ բառացիօրէն: Բազ-զատել Հին Կտակարանի Ծն. 39, 1 מִצְרֵי LXX Արյուս:

110. Մովար՝ աքքատ. անMa'-ab, հ-զիպտական բնագիրներու M-l-bn է, Simons J., Handbook for the study of Egyptian Topographical lists of Western Asia, Leiden, 1937, էջ 205; Հին Կտակարանի մէջ նաև լիշտակուած: מַוֹעַב, Moab, Ասոր. Շօս, Զօհր. Մովար, Ղպտ. Môab, Եթովպ. Moabe, Արար. Այս, Վուկ. Moab, Երեմ. Օրին. 1, 5; Թունց 21, 13; Երեմ. 48, 4; Յորդանանի և Մեռեալ ծովու արեւելակողմը՝ Անոնին վտակի հարաւը կը տարածուէր Մովարացիներու երկրամասը՝ այժմու «Գերաբ»ը:

111. Ցիլ-Պէլ՝ աքքատ. Sil-Bél, Երել Ցլ «Պէլի շուքը» կը նշանակէ, ծանօթ Սենքերիմի և Աշուրպանիրալի շրջաններուն, նաև Revue Biblique, 1911, էջ 211.

112. Գազայ՝ աքքատ. անHa-zi-ti, հ-զիպտական բնագիրներու Qa-da-taն է, Max Müller, Asien und Europa, nach Altägyptischen Denkmälern, Leipzig, 1893, էջ 87; Max Burchardt, Die alkaanäischen Fremdwörter und Eigennamen im Aegyptischen, Leipzig, 1909,

Zweiter Teil, թիւ 962, 1071; W. Foxwell Albright, The Vocalization of the Egyptian Syllabic Orthography, New Haven, Connecticut, 1934, էջ 58; Հին Կտակարանի մէջ լիշտակուած է նաև הַזְּ LXX Γάζα, Հերոգլուուի Կածուէ, Ասոր. Յְהֻזָּה, Վուկ. Gaza, Զօհր. Գազայ, Եթովպ. Gazese, Ղպտ. Gaza, Արար. Զի, Ծն. 10, 19; Երեմ. Օրի. 2, 23; Յես. 10, 41; Երեմ. 25, 20; Պազհատինի հարաւ-արեւելան անկիւնը, մօս Եղիպտական սահմանին, չորս հազար մեթր հոսու գրեթէ Միջերկրականէն կը տարածուէր, Փղշտացիներու հինգ քաղաքներէն մին: Գազան: Henri Gauthier, Dictionnaire des Noms Géographiques contenus dans les Textes Hiéroglyphiques, Le Caire, 1931, tome 5, էջ 164, 213:

113. Ասկալոն՝ աքքատ. անIs-ka-lu-na, Եղիպտ. բնագիրներու Ash-qa-lu-naն է, Max Burchardt, Die alkaanäischen Fremdwörter und Eigennamen im Aegyptischen, Leipzig, 1909, Zweiter Teil, թիւ 142; W. Foxwell Albright The Vocalization of the Egyptian Syllabic Orthography, New Haven, Connecticut, 1934, էջ 49; Henri Gauthier, Dictionnaire des Noms Géographiques contenus dans les Textes Hiéroglyphiques, Le Caire, 1931, Tome 1, էջ 105; նաև լիշտակուած է Հին Կտակարանի մէջ, נַלְקָשׁ LXX 'Ասկալոն, Վուկ. Ասոր. Ասկալոն, Զօհր. Ասկալոն, Ղպտ. Ascalon, Եթովպ. 'seqalone, Արար. Աշկալոն: Փղշտական ծովեղերեայ քաղաք մըն էր Ասկալոնը՝ Միջերկրականէ վրայ, Աերիելայ գաշտին մէջ, Գազայի և Ազովտի միջն, Այժմու Աւելան է՝ Ասկալոնն:

114. Իգաուուու՝ աքքատ. անIka-u-su, թերես Փղշտացիներու Սազրաբ՝ אַכְיִשׁ Յուն. ԱշԽուչն է: Revue Biblique, 1911, էջ 211:

115. Ակկարոն՝ աքքատ. անAm-kar-ru-na, Բազզատել Եղիպտ. 'Ի-ո-ց-ն, Simons J., Handbook for the study of Egyptian Topographical lists of Western Asia, Leiden, 1937, էջ 202; Հին Կտակարանի մէջ լիշտակուած նաև עֲקָרְוֹן LXX 'Աքարան, Ասոր. Ասկալոն, Վուկ. Ակկարոն, Զօհր. Ակկարոն, Ղպտ. Akkarôn, Եթովպ. aqarone, Արար. Նորայ: Փղշտացիներու հինգ վլխաւոր քաղաքներէն մին: Իրենց երկրամասին հիւսիսակողմը զետեղուած, այժմու Աւան է՝ Ակկարոնը:

116. Միլքիաշաբայ՝ աքք. Mil-ki-a-sha-pa, երայերէն արտագրութեամբ **ՊՏԱԿԱՆ**։
 117. Կէպալ՝ աքքատ. ձև Gu-ub-li, հ-
գիպտ. բնագիրներու Կս-բ-նին է. Max Mül-
ler, Asien und Europa... էջ 188: Max Bur-
chardt, Die altkanaanäischen Fremdwörter...
Zweiter Teil, թիւ 970, 975: Henri Gauthier,
Dictionnaire des Noms Géographiques ...
Tome cinq, էջ 198: W. Foxwell Albright,
The Vocalization of the Egyptian... էջ 60:
Կրո արտագրութեամբ Simons J., Handbook
for the study of Egyptian... էջ 217: Յիշա-
տակնւած է նաև Հին Կտակարանի մէջ,
Եղա LXX Եվթու, Ղպ. Neoidjōm, հաւանա-
բար Եվթու Եվթու Կտակցած են, նոյնպէս
Զօհր. մատենագէտք, իսկ Ասոր. Ա-Ա-
Վուլկ. Giblij, եթովպ. Gebale չեն զիւրի-
մացած բնագիրը: Թրիփոլիի և Կէյութի
միջև Փիւնիկեան քաղաք մըն էր Կէպալը,
այժմու որ «փոքրիկ լեռ» կը նշանակէ:
118. Մաթանպա'ալ՝ աքքատ. Ma-ta-an-
ba'-al երայական արտագրութեամբ **ԵՎ-
ՄԴՆ**, որ կը պատահի Թագղաթփաղսար
Դ-ի շրջանին՝ նաև Revue Biblique, 1910,
էջ 198:
119. Արվատ՝ աքքատ. ձև A-ru-ad-da,
Փիւնիկեան քաղաք մըն է:
120. Ապիստ'ալ՝ աքքատ. A-bi-ba'-li,
երայական արտագրութեամբ **Ա-Բ-
Ե-Ա-Լ**:
121. Սամումուրուննայ՝ աքքատ. ձև
Sam-si-mur-ru-na, Փիւնիկեան քաղաք մըն է:
122. Բուտսիլ՝ աքքատ. Bu-du-il, եր-
աշյակն արտագրութեամբ՝ **Ն-Գ-Փ**, յիշա-
տակնւած է նաև Անիկքրիմի շրջանին:
Revue Biblique, 1911, էջ 211:
123. Պէթ - Ամուլ՝ աքք. ձև Bît-Am-ma-
na, երայական արտագրութեամբ **Բ-Ի-
Մ-Ո-Ն**։
 124. Ախիմիլկի՝ աքքատ. Ahî-mil-ki,
նմանակերտ անուն մը նաև Հին Կտակա-
րանի մէջ՝ **Ն-Ի-Մ-Ի-Լ** նովրայի քահանան՝ 1
Սամ. 21, 2: 23, 6: Դաւիթի քահանան 1
Մնաց. 24, 3, 6:
125. Ասեգովթ՝ աքքատ. ձև As-dû-di,
եղիպտական բնագիրներու As(i)diđiն է,
Max Burchardt, Die altkanaanäischen Fremdwörter
... Zweiter Teil, թիւ 146: Henri Gauthier,
Dictionnaire des Noms Géographiques ...
Tome 1, էջ 107: Յիշատակնւած է նաև
Հին Կտակարանի մէջ, **Դ-Ո-Շ-Ա** LXX Ասօնան,
Ասօնան, Աշարու, Ասոր. Ա-Զ-Ա-Լ, Վուլկ. Azo-
- tus, Ղպտ. Azôtos, Եթովպ. 'zata, Զօհր. Ա-
զովտ, Ասեգովթ, Արաբ. Ցհո. 11,
22, Ա.մ. 1, 8, 2: Մնաց. 26, 6: Փղտա-
ցիներու հինգ գլխաւոր քաղաքներէն մին
էր Ասեգովթը՝ այժմու Էսդուդը.
126. Եքիշթուրա՝ աքքատ. E-ki-ish-tu-ra,
բաղդատել յունական՝ Աքետարը, Revue Bib-
lique, 1911, էջ 212:
- Սաորե ներկայացուած բաղդատու-
թիւնները՝ յաւնական անուններու հետ, առա-
նուած են Revue Biblique, 1911 տարեցրջանի
212րդ էջէն:
127. Իտալիոն՝ աքքատ. ձև E-di-til,
յուն. Պաջառ՝ այժմու Daliն է:
128. Բիլակուրայ՝ աքքատ. Bi-la-a-gu-
ra-a, Կրնայ Pylagorasը Ըլլալ. անձնական
անուն մը չէ սակայն այս վերջինը: George
Hill, A History of Cyprus, Cambridge, 1940,
Volume I, էջ 107:
129. Խիգրուս՝ աքքատ. ձև Ki-i-tru-si,
յուն. Խուրօս, այժմու Կյորեան է:
130. Փիսու՝ աքքատ. Ki-i-su, բաղդա-
տել յուն. Kisoը:
131. Սիլլուայ՝ աքքատ. ձև Si-il-lu-i-u-a,
Sillume, Տալամիչն է, Ֆամակուսթայի ծովա-
ծոցին մէջ:
132. Իթուանտար՝ աքքատ. I-tu-u-an-
da-ar, բաղդատել յուն. Eteóanðrosը Eteand-
rosի փոխարէն:
133. Բափոս՝ աքքատ. ձև Pa-ap-pa, բաղ-
դատել յուն. Πάφοςը, Neapaphosի տեղւոյն
վրայ:
134. Էրիսու՝ աքքատ. E-ri-su, բաղ-
դատել յուն. Ερεσօսը:
135. Խոլի՝ աքքատ. ձև Si-il-li, բաղդա-
տել Σόλοι, արդի Karovastasի մօտ:
136. Տամասու՝ աքքատ. Da-ma-su,
բաղդատել յուն. Δάμασοςը:
137. Քուրիում՝ աքքատ. ձև Ku-ri-i,
բաղդատել յուն. Κούριονը, այժմու Episcopiի
մօտ:
138. Աթմէսու՝ աքքատ. At-me-e-su,
բաղդատել յուն. Αδμησօսը:
139. Թամէսի՝ աքքատ. ձև Ta-me-si,
բաղդատել յուն. Τάμασος, Ταμασօսը,
այժմու Peraն:
140. Տամուսի՝ աքքատ. Da-mu-u-si:
բաղդատել յուն. Δάμυսօսը:
141. Կարթիխատասթայ՝ աքքատ. ձև
Qar-ti-ha-da-as-ti, (תַּדְשַׁחַת-חִתְּתָה), Կարթե-
գոն, Kitionն է.

2. 142. Ունասակուսու՝ աքքատ. U-na-sa
րա-su, բաղդատել յուն. «Օնտակասօը»:
143. Լետրայ՝ աքքատ. ալuLi-di-ir, բաղ-
դա-Լետել Լեթրա, իտալիոնի հիւսիսակողմը:
144. Պուցուսու՝ աքքատ. Bu-su-su,
Ալլեղդատել յուն. Եսօըը:
145. Նուրիայ՝ աքքատ. ալuNûri-ia, մի-
eit, առէ Նորա մը:
146. Եաթնանայ՝ աքքատ. մալuIa-at-na-
կիպրոսն է:
147. Լիբանան՝ աքքատ. մալuLab-na-na,
կար. Lbnng, Հիթիթ. La-ab-la-naն, Ե-
շամպտ. բնագիրներու Rmnн և Rbrnг. Max
Killer, Asien und Europa ... էջ 197. Max
Erhardt, Die altkaanäische Fremdworte ...
leiter Teil, թիւ 612. Adolf Erman und
Germann Grapow, Wörterbuch der Aegypti-
schen Sprache, Leipzig, 1928, Zweiter Band,
421. Henri Gauthier, Dictionnaire des
Géographiques ... Tome 3, էջ 120.
148. Թեաւոր ցուլ՝ աքքատ. lamassu,
զեւծի զիխով, կնոջական մարմնով, այս
ուստուած պահապան ոգին, օձեր երկու
կեռող լեռնաշղթան է Լիբանանը:
149. Թեաւոր ցուլ՝ աքքատ. lamassu,
պարկառագու էր, պալատներու և տա-
ռու աներու մուտքին կը զետեղուէր, չար ո-
ւ մերու մերձեցումէն զերծ պահելու հա-
մանու զանոնք: Edouard Dhorme, Les Relig-
ions Bal de Babylonia et d'Assyrie, Paris, 1945,
266. G. Furlani, La Religion Babilonese
14Assira, Vol. I. Le Divinita, Bologna, 1928,
էջ 337-338:
150. Սուտակ՝ աքքատ. shedu, ոգի ի-
շումաստով չին կտակարանի մէջ, ԴՇ, Ասոր.
Ալլա, Արամ. ՃՇ, երկր. Օրի. 32, 17:
Սաղմ. 106, 37. — Տաճարներու և պա-
տրատներու մուտքին կը զետեղուէր sheduն,
ո զ աղջիւրաւոր խոյրը զիխուն, թեաւոր ցուլն
ու ան, կիսաստուած մը՝ միաժամանակ,
պահապան ոգին, մարդուն, տան, քաղա-
քին, տաճարին. չար ոգիներու կարգին կը
շառուէր սական երբեմն: Edouard Dhorme,
Les Religions de Babylonia ... էջ 266. G.
Furlani, La Religione Babilonese ... էջ 336.
150. Սուտակ՝ աքք. անuAshnan, սում.

2. An-she-tir. pyroxenic «հանքային նիւթ մը»,
որ հրաբխային արտադրութիւններու մէջ
կը գտնուի», feldspatho «գաքքարային» ժայռն
է ան, basalt «սևաճուկ» և augite ժայռը՝
մասնաւորաբար, գտնուած Յուտի-Տաղի
ստորոտը և ձեզիրայի գաշտագետնին մէջ,
R. Campbell Thompson, A Dictionary of As-
syrian Chemistry and Geology, Oxford, 1936,
էջ 164.

151. Գունաւոր մարմար՝ աքքատ. անu
Tur-Mi-Na, գտնուած էր Սարկոնի կողմէ
Ուիզիկուայի burashu կոչուած շոնիի լեռնե-
րու մէջ, Վանայ լճին մօս. տե՛ս François
Thureau-Dangin, Une Relation de la Huitième
Campagne de Sargon, Paris, 1912, էջ 45,
տող 280 և ծան. 2, ուր անuTur-Mi-Na
«գունաւոր մարմար» կը թարգմանէ, իսկ
Meissner, Beiträge zur Assyriologie, III էջ
212, լոկ «մարմար»:

152. Պրէսսիայ՝ աքքատ. անuTur-Mi-Na
Banda «փոքր Tur-Mi-Na», Պրէսսիայ. Գար-
րիտարկիլայէն բերուած էր, Սենեքերիմի
կողմէ, King, Cuneiform Texts from Babylonian
Tables in the British Museum, XXXVI,
III, 59. Կարքէմրէն քանի մը մզոն գէպի
հիւսիս, Breccia գտնուած է. կապոյտ քարէ
Brecciaն, Ճուլամէքէն ոչ հեռու, Ճելլու
լեռներէն կուգար: Իմաստը հաստատուած
էր, Բարելոնի մէջ կատարուած, Koldeweyի
յայտնումներով իբր «rotweiss glasierte, vul-
kanische Breccia», Aiburshabu, 6, Ebeling-
Meissner, Reallexicon der Assyriologie, I.,
437. R. Campbell Thompson, A Dictionary
of Assyrian ... էջ 193:

153. Դեղնկեկ կրաքար՝ աքքատ. անu
A-lal-լս, արձանագրութիւններու և շէնքե-
րու իբր սալայատակ գործածուող, R. C.
Thompson, A Dictionary ... էջ 159:

154. Պողաձե-կրաքար՝ աքքատ. անu
Gi-rin-sin-gub-ba, պողաձե կրաքար մըն է
“fruit-shaped pyrite”, զարդարանքներու մէջ
գործածուող: Thompson, Dictionary ... էջ 89:

155. Ամանոս՝ աքքատ. մալuHa-ma-ni-im,
հիւսիսային Ասուրիոյ մէջ լեռնաշղթայ մըն է:

156. Անուան գրութիւն՝ աքքատ. տո-
սարս, որ սեմականացած ձեն է սկզբնական
սումերական մո-սարին, որ տանուան գրու-
թիւնո կը նշանակէ:

ԱՆՈՒՇԱԽԱՍՆ ԱԲԴ. ԶԱԶԱՆԵԱՆ
(Աերջ 5)

"ՀԱՅ ԲՈՒՍԱՇԽԱՐԵ"

Մատագին հանոյինք է որ, «Ֆիոնեի ներկայ և յաջորդ բիւրուն մէջ, կը հրատարակինք հանձնուցին բանակը և ուսուցիչ Կուռավեա Գարիկինի Հայ Բալաշխարե» ձեռագիր հատուեն, ոսյ յօդուածաւերք:

Հանձնուցին բանակին «Բառզիրք Սիրատահայ Գաւառաւեղութիւն» սոււար եւկախուրին պատրութիւնը յանալու վրայ է Ա. Սրուոյ պարանին, ծախսովք Ամերիկայի Սերաստացիներու Հայենակցուական Միութիւն: Խոկ «Բալաշխարե» որ իր եւրոգ հոգեզաւակը կը սիրէ անուանել հանձնուցին բանասէրք, կը մնայ անկուին ձեռագիր:

Ճիմա որ ոչ եւս է զաւառի հայութիւնը, եւ կասկի մը նույրականութիւնը ամենուս վրայ կը ծանրանայ անիէ մեզի բոլուած մասւոր ու բանական անիէ ժառանձնութիւնը յաւերճացնելու պարականութիւնը, որքան սիրելի պիտի ըլլար բոլորին համար երատարակուած տանին նաև այս վեցին եւկախուրիւնը:

ԽՄԲ.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՈՒԹԻՒՆ ՄԸ ԳՈՐԾԻՍ ՎՐԱՅ^(*)

Զեննարկս եւ զործիս սկզբնաւորութիւնը. — Տարիներ առաջ երբ Սերաստիոյ Գաւառարաբառուը^(**) պատրաստեցի, բաւական թուով ալ բուսաբառեր առած և որքան կարելի էր, զիտականօրէն ճշգած էի զայնս, և այդու իմ այդ համեստ գործս առաւելութիւններ մը ունենալը ըսոււած էր իզմիրեանց Գրակ, Պատ. Փողովին առջէ: Բայց վերջէն տեսայթէ բուսաբառական այդ մասը շատ թերի էր, քանի որ թէ զիւղացի թէ Սերաստացի ժողովարդին լեզուին մէջ իմ հաւաքածէս ու կարծածէս շատ աւելի բուսաբառեր կան եղեր, զորս կրնալ առնելու պատեհութիւնը չէի ունեցած այն ատեն, լաւ ևս բուսաբառք մասնագիտական գործի մը յատուկ կրնային ըլլալ: Աւստի վերջէն խորհեցայ թէ կ'արժէր Հայ բուսաբառը առանձին աշխատասիրութեան մը նիւթ ընել: Առ այս անհրաժեշտ էր նախատարերք ատաղձը ձեռք բերել — Հայ բուսաբառը — և ատոնց ցոյց տուած բոյսերը ձանձնալ: Քաղաքի — Սերաստիոյ

(*) Մասամբ հրատարակուած «Վանտուրընի մէջ»,
(**) «Բառզիրք Սերաստահայ Գաւառաւեղութիւն 1903ին պահաւորուած իզմիրեանց Գրակ, Պատ.

— բարբառին մէջ կան պատռւական բուսաբառեր, բայց ասոնք մեծ թիւ մը չէին կազմեր. քաղաքենին վերջապէս երկրագործ չէ, ըստ սրում բոյսերու՝ իր ունեցած ձանաչողութիւնը մասամբ յարաբերական է, Բուսաբառերու մթերքը Հայ զիւղերն էին. պէտք էր շրջիւ ու լսել բուն իսկ շնչականին բերնէն ու հաւաքել զայնս: Տարուան գորոցական արձակուրդներս մեծ մասով յատկացուցած էի այս բանիս. և զրեթէ բոլոր զիւղերը շրջեցայ — Ալիսի Հովհաննինչև Զառա, անտի ինտիրէս. Սկզի հարաւարեւելք կիլիկեան զիւղերը. զէտի արևմուտք եւլտրզ-էլի-ենի-իլան. Եւզու կիա, Արթովայի Հայ Գիւղերը, Ղաղ-օվա (Հինն Գաղփուրա՝ Գաղփմանեայ), նոյնակս այս սահմաններուն մէջ ինկած բարձրաբերձ լեռներն ու անտառները — Անտիտօռոս. Թէ ձէր. Գարապէլ. Պէյ-Տաղ. Հապէշ-Տաղ. Քէսոէ Տաղ. վերջապէս Ալեոր Մասիսին ձագուկը ու անոր մանրանկար պատմական Աստղիկը (2500 մ.) Մեծին Միհրդատի կայանքը ու Սենեքերիմայ սրգուց Դաւթայ և Աստմի պատաստանարանը, ուր կան գեռ հոյակապ բերգի մը աւերակները և արեմբուան Աստղկան Տաճարի մնացորդները, ստաշինի ու պաշտելի: Դեռ հաճոյքով կը վերյուշեմ — թէպէտ տաֆանքով լի — այս վերելքներս ու թափառումներս: Այս շրջադայումներուս մէջ հաւաքեցի շատ Հայ բուսաբառեր. և օրովհետեւ ասոնք առանձինն արժէք մը պիտի չունենային և սրոյս ինչո՞ի տարտամութենէն գուրս չպիտի կը բնային գալ, առանց իրենց ցոյց տուած բոյսը ճանչնալ և զայն զիտնականօրէն ներկայացնելու, ուստի այդ շրջած տեղերուս ֆլորայի բուսաբան մ'ալ (Herbier) կազմեցի: Ամառնային այս շրջագայումներս բնական է, բաւական չէին ֆլորան ամբողջացնելու, քանի որ միւս եղանակներն ալ — մանաւանդ Գարունը — ունին իրենց յատուկ բոյսերն ու ծագիկները. ուստի Շաբաթ և կիրակի օրերը և մանր մունք արձակուրդներ յատկացուցած էի, ձնհալէն սկսեալ մինչև ձիւնը գետին իյնալը — Քաղաքիս մերձակայ լեռները (Մայրագոմ, Գարտաշլար) դաշտերը ու Հայ զիւղերը այցելելու և բուսաբանիս կարեոր պակասները ամբողջացնելու: Բայց առաջադրեալ «Հայ Բուսաշխարհ» մը կազմելու համար

զիսէի թէ այս շրջանակը շատ նեղ էր. պէտք էր շրջել Փոքր Հայքէն վերջ Մեծ Հայքը և Կիլիկիա ալ, ինչ որ շատ գըժաւար էր ալեւ Հայ Ռւսուցչի մը համար։ կը թար ուրիշ միջոց մը. Սերաստիան — արդէն ինք ալ իր բնագաւառ Վասպուրական աշխարհի տարագիր ժողովուրդ — իր աժան հացին ու ապրուստին և բանուկ ու Ընդարձակ առուտուրին համար իրեն ձգած է շրջաբնակ քաղաքացիներու ստուար գաղթականութիւն մը — Կիւրինցի, Ակնցի, Փինկեանցի, Արարկեցի, Երզնկացի, Քեցի, Խարբերցի, Հայէնցի, Ան. Ան. ասոնցմէ ալ հաւաքեցի մեծ թիւով բուսաբառեր, բոյսերը իրենց ցոյց տալով, որով գրեթէ բոլոր Փոքր Հայքի ու մասամբ Մեծ Հայքի բուսաբառերը հաւաքած եղայ։

Դժուարին գործը սակայն այս ամենէն զերջն էր. պէտք էր բոյսերը զիտականօրէն ճշգել, նկարագրել. բոյսին ընտանիքը, սեռը, լատ. Փրանս. անունները որոշել. առանց այս բաներուն ամուռ աշխատութիւն պիտի կատարած ըլլայի։ Այս ամէնը ընելու համար պէտք էր բուսաբան մը ըլլալ. մինչեւ ես բուսաբանութեան վրայ տարտամ ծանօթութիւն մը միայն ունի։ Խորհեցայ թէ բարձրագոյն վարժարաններ բանունողներ, բժշկական համալսարաններէ գարձողներ պիտի կրնային ձեռնտու ըլլալ ինձի. բայց տեսայ թէ բուսաբանութեան մասին ասոնց սորվածը աւելի տեսականին մէջ էր, կամ մասնագիտական միայն, ու իրենք ալ ցոյց տուած բոյսերուս առջև կը շըւարէին, կամ, հազիւ իմ տարտամ բաներ մը կ'ըսէին։ Սեփական աշխատութիւնը միայն պիտի կրնար զիս այս անել դրութենէն գուրս բերել։ Թրանսերէն ընդարձակ բուսաբանութիւններ և մասնագիտական գործեր ձեռք բերի. շատերը Ժարէ նարէ պատկերներով, որոնք մեծ առաջնորդներ եղան ինձի, և զիս գործնական հողի վրայ դրին։ Գեղազործական քիչ շատ ունեցած ծանօթութիւնովս օգտաւեցայ նաև Dorvantէն և այլ գեղարանական գիրքերէ։ Հայերէն գործերու մէջէն ինձի առաջնորդներ եղան նաև Հ. Մէնէլիշեանի Բուսաբանութիւնը^(*), Հ. Հ. Ալիշանի Հայ Բու-

սակը, Երեմեանի, Լուսինեանի Փրանսահայ բառարանները, Բժշկապետ Բէստէնի բժըշկական բառարանը, ինչպէս նաև Տք. Յովհ. Արթինեանի «Ճունկերը և անոնց Հայերէն անունները» փոքրիկ գործը։ Հ. Քաջունիի գիտ. բառարանը տեսած չեմ։

Ձեռազիր բժշկարանի. Ախրարէ. Արնեստա - Քիմիաբանական գիրեներ. Տօնարեն. — Հայ Բուսաբանութեան վրայ մասնագիտական այսպիսի գործի մը մէջ կարելի չէր զանց ընել և չառնել Մեր Մատենագրութեան մէջ յիշուած և ի մասնաւորի ձեռագիր բժշկարաններու բուսաբառերը։ Սերաստիա, ինչպէս հիմակ ալ ուսուցչի և բժիշկի տեխի քաղաք մը, անցելոյն մէջ ալ ունեցեցի է բաղմաթիւ բժիշկներ։ Ասար Սարկաւագ, Բիւնեաթ, Մարտիրոս, Օհան-Պարսամ. ասոր որդին Պարսամ՝ բժիշկ-մատենագիրներ եղած են և արժէքաւոր գործեր թողած։ Կ'երևայ ասոր համար է որ Սերաստիոյ մէջ ամենէն շատ ձեռագիր բժշկարաններ կը գտնուին, ինչպէս նաև վեցհազարեակներ, Ախմարքներ և այլ Արենստաբանական և Քիմիական գրքեր։ Լոկ եօ 20ի չափ ձեռագիր բժշկարան հաւաքած եմ, և 30ի չափ ալ ուրիշներու քով տեսած կամ լսած։ Իմ ձեռաւթերու մէջ կան Միխիթար Հերացիի, Մտեփանոս Եգեսիացիի, Ամիրու. Ամասիացւոյն և Սերաստացի բժշկացն Օհան-Պարսամի, Պարսամի, Մարտիրոսի, Ասար Սարկաւագի կարեւոր գործերը, ինչպէս նաև 1512ին մեր Առաջին տպագրութեամբ ի լոյս ընծայուած՝ Ճալինոսի (Պաղիանոսի) բժըշկարանը։ Ասոնց ցուցակագրութիւնը վերջէն պիտի ընեմ. հոս միայն իմ հասկցածիս չափ ասոնց բուսաբառերուն վրայ իմ կազմած գաղափարս պիտի ուղէի պարզել։ Ընդհանուր առմամբ պէտք է ըսել թէ Բժշկական մատենագրութիւնը կը սկսի ի մեզ ԺԱ. Պարսւն Միխիթար Հերացիով. Մտեփանոս բժիշկ Եգեսիացի, որդի Ահարոն բժիշկի, զայնու շարօւնակած (1236) ու Ամիր Տօվլաթ ճոխացուցած ու ամբողջացուցած է. Ասարի և Մարտիրոսի գործերն ալ ինքնուրոյն և ինքնատիպ կրնան համարուիլ. ասոնցմէ զուրս Թիացեալները գրեթէ ասոնցինուն ամփոփումները, ընդօրինակութիւնները ու ինչ ինչ յաւելումներ, ինքնագրութիւններ են։ Մեր բժշկ-փիլիսոփաներու թիւններ են։ Մեր բժշկ-փիլիսոփաներու

(*) Հ. Մէնէլիշեանի սոյն գործը հետևողութիւն կամ զրեթէ թարգմանութիւնն է մեր քով եղած Փրանս. նմանօրինակ գործի մը,

այս հոյակապ գործերը ըստ մեծի մասին թարգմանութիւն կամ հետևողական հեղինակութիւն են Արար, Պարսիկ, Ասորի, Հրեայ (արարերէն հեղինակած կամ զրած) Յոյն և Լոտին հեղինակութիւններու ։ Ամենէն աւելի Ամիրու ։ Է որ իր ժամանակի դասական-դիտական ուղղութեամբ դասաւորած և կարգաւորած է իր բազմավաստակ գործերը և դիտական ուղղութիւն, մէթու և ողի զրած է անոնց մէջ :

Ալլան այս գործերը թարգմանութիւն թէ հեղինակութիւն, մեր Բժիշկ-Մատենագիրները ի հարկէ պիտի ընդունէին և ընտրէին իրենց ընտրած օտար հեղինակներուն դիտական բառերը — բուսաբառեր, գեղերու անուններ, ախտանուններ են. — նոյնութեամբ, իրեւ ընդհանութիւն ընդունուած և արուեստին մէջ (բժշկութեան) ի կիրարկուած դիտական-արուեստական բառեր։ Ալլապէս ալ չէին կրնար. շարժիլ, քանի որ նոյն բանը կը տեսնենք այսօրուան դիտական աշխարհին մէջ ալ։ Բժշկարանաց միւս մասերը մէկ կողմ թողելով՝ վեր առնենք միայն անոնց բուսանունները. և այս ընկերու ատեն ստիպուած ենք եթալ միլլնիլ ։ Յ. Բուսակի մէջ :

Մեծ Հայրենախօս Նահապետը իր այս հոյակապ գործին մէջ ալ նիւթը ամէն կողմէրովը լայնօրէն ընդգրկած է. իր արեւ-Հանճարի ճառագայթները կարծես ոչ մէկ մութ անկիւն թողեր են մէր Հին ու Նոր Մատենագրութեանը մէջ. ուր որ բոյսի մը անունը, նշուլը, հոտը կայ, հազիւ անոնցմէն ճառագաղ մը թողեր է մեզ նման թզուկ իր թոռներուն։ Այնքան ձեռագրերուս մէջէն հայիւ փաքրթուով բառեր կամ մէջբերումներ կը գտնուին որ Հայ Բուսակի մէջ չկենան։ Իր գործի հիմունքը կը կազմէ մասնաւորապէս Ամիրու. ի Անդիտաց անպէտը կամ Բժշկական Բառարանը։ Ինչպէս ինք Ամիրու. Կ'ըսէ իր յառաջարանին մէջ, բառարանական կարգով — այրուբէնի զրայ — դասաւորած է բառերը, անխտիք գնելով հայերէնի առաջարձուած օտար բառերը թէ հայերէն բառերը և յաճախ մէկէն միւսը զրկելով։ Հայերէն բուսանուններու մեծազոյն մասը թարգմանութիւնն են օտար նոյն բառերուն, շատերն ալ արգէն մեր լեզուին մէջ գտնուած հայերէն անուններ են։ Այսու Ամիրու. կրկնակ ծառայութիւն մատու-

ցած է. մէկ մը՝ այդպէս արգէն գոյութիւն ունեցած հայ բուսաբառերը ճշգած և զայն Հայ-դիտակ. բառերու կարգ անցուցած է. երկրորդ Հայերէն թարգմանածոյ բառերը ժամանակի վաղնջականութեամբ կերպով մը նույրագործուած են իրեւ հայերէն բուսաբառեր ընդունուելու այսօր ալ։ Պէտք է ըսել նոյն ատեն թէ Միթար Հերացի ալ գործածած է միւնոյն Հայ բուսաբառերը, ըլլան Բուն Հայերէն թէ թարգմանութիւն, ու Ստեփաննոսի բժշկական բառարանին մէջ ալ կը գտնենք ան միւնոյն բուսանունները, ինչ որ Ամիրու. գործածերէ. որով ինք Ամիրու, աննախընթաց բուսաբառագիր մը չէ, և ըսել է, իր աղբիւներն ալ կը բարձրանան մինչեւ ԺԱ. դար, ու ինչո՞ւ երկմտիլ՝ թէ անկէ առաջ բժշկական մատենագրութիւն ունեցած չենք։ Հ. Ալիշան ալ բժշկարանաց այս բուսաբառերը առած է և գրեթէ ամենամեծ մասամբ ճշգած է օտար թէ հայ բառերը՝ արուած տառագարձումներէն կամ Արար հեղինակներու՝ Եւրոպական թարգմանութեանց վրայէն։ Թէկ անոր այս ճշգումները խորազնին բանասէրներու մօտ գեռ ինդրոյ տակ են, և շատեր — ինչպէս Ն. Բիւզանդացի — շատ սխալներ մատնանշած ըլլալնին կ'ըսեն։ Ամիրու. ալ իր թուած բոյսերը — մեր երկրի թէ տար աշխարհներու — ամէնը տեսած, ճանչցած և բոյսին վրայ տուած չէր կրնար ըլլալ իր նկարագրութիւնները, ինչպէս ինք ալ կ'ըսէ շատերը ի գրոց են կամ ի լրոյ։ Հ. Բուսակի միւս բառերը առնուած են մեր մատենագրութիւններէն ու ցանուցիր հրատարակութիւններէ։ ասոնք ըստ մեծի մասին գիտականօրէն ճշգուած չեն, իսկ Գաւառական Բուսաբառերէն անոնք միայն ճշգուած են, որոց որ չորցուած բոյսը զրկուած են իրեն ու ինք ալ զայնս ճշգել տուած է Բատուայի Համալսարանի Բրօֆէսօրներուն։ Հ. Ալիշան կ'ըսէ որ նոյնիսկ այդ բրօֆէսօրները բոյսերէ շատերուն գիտական անունները տարակուսանօք յայտնած կամ որոշած են, նոյնիսկ բոյսը իրենց անձանօթ գոլով։ Արգ, ինչպէս կը տեսնուի, Եւրոպայի ֆլորայէն բաւականին տարբեր Հայաստան աշխարհի այլազան բոյսերը՝ ճշգելու գործը աղէկէն կնճռոտ հարց մ'է, բուսաբան բրօֆէսօրներ վարանեցնելու աստիճան։ հապա-

ուր կը մնան մեզի նման հասարակ մահանացուները:

Մեր արդի գրաւոր Բուսաբառերը. — Հայկազնեան բառպիրք նուիրագործած են թժկարաններու տուած և մեր մատենաւ զբութեան մէջ յիշուած բուսաբառերը: Հ. Բուսակի խուղարկումներէն վերջ Հայերէն Բուսաբանութիւնք, Փրանսահայ հասարակ և զիտակ. բառարաններ ճոխացած կը գտնենք հայացի բուսանուններով. սակայն և այնպէս պակասը խիստ մեծ է, և շփոթութիւններ զիրար կը խաչաձնեն. ուստի Բառագիր թէ Բուսաբանութեան հեղինակներ ու գրագէտներ հարկին առջև խոնարհելով՝ բոյսերուն գողտրիկ և շատ անգամ ալ բռնազրօսիկ թարգմանութիւններ տուերեն, հարկաւ իւրաքանչիւրը իր հասկցած և ընդունած կերպովը, որով հայ բուսաբառերու թռհ ու բոհ մը ստեղծուած է: Խուազ գողտրիկ ռամկաբոյր գաւառական բուսաբառերու ասոնց վրայ գալ աւելնալը ի հարկէ հաշտ աչքով չպիտի դիտուէր մեր գժուարահամ Բառագիրներէն ու Գրագէտներէն: Արդ քննենք քիչ մ'ալ սա մեր անզիր դպրութեան բուսաբառերը: Հոս ամենէն աւելի աչքի զարնող պարագան պիտի ըլլայ:

Ցոյսերու անունները եւ անուանակոչումը. — Ցայտնի է թէ Մարդուս՝ երկրի վրայ ծագումնի ի վեր բնութեան և բնական օրէնքներու հետ ունեցած ծանօթութիւններու ամբողջութիւնը կը կազմէ այսօրուան գիտութիւններու շարքը: Ցուսական աշխարհին հետ մարդուս յարաբերութիւնը պէտք է որ շատ կանուխէն սկսած ըլլայ: — Նախապատմական շրջաններէ սկսեալ — քանի որ իր գոյութեան պահպանումի անհրաժեշտ ու անմիջական տարերքը կը կազմէին — և ցարդ կը կազմէն — բոյսեր, արմատներ, վայրի պտուղներ, հատիկներ ու հունտեր: Ուստի ան՝ Մարդս — ճանչցաւ հետզհետէ անոնցմէ իւրաքանչիւրը իրեր սնունդ, գեղ ու գարման, անոնց օգտակար կամ վնասակար ըլլալը, ակնահաճոյ տեսքը, գոյնը, թոյրն ու բոյրը, և զանոնք կերպով մը դասաւորելու և տարրուցելու համար անուններ տուաւ անոնց: Ինչե՞ր և ի՞նչ բաններէ առնուած կրնային ըլլալ այդ անունները: Ի սկզբան անդ Մարդուս ծանօթութեան սահմանին

մէջ բոյսերէն վերջ կը գտնուէին ընտանիթէ վայրինի անասուններ, թռչուններ, միջատներ և ինչ ինչ նախնական գործիքներ, զէնքեր, առարկաններ. մինչև Հովուի Քիրն ու Հովուի մախաղը: Ան՝ մարդս, տեսաւ բոյսերու զանազան մասերուն ու կենդանիներուն անդամներուն և առարկաններուն ձեւերուն միջեւ նմանողութեան աղերս մը ու ըստ այնմ անուններ յարժարցուց: Այս անուններէ հետզհետէ ընդհանուր աղական գարկան գրուեցան Սովորութեամբ նուիրագործուած նախնեաց այդ բուսաբառերուն առջև խոնարհիլ ու ընդունիլ զայնս իբրև Գիտական անուններ բաւոց: Այս այսպէս ըլլալը հաստաելու համար բաւական է ակնարկ մը նետել գիտութեան ընդունած լատին կամ Փրանս. բուսաբառերուն վրայ: Ակնարկ մը նետելով մեր հաւաքած անզիր դպրութեան բուսաբառերուն վրայ ալ, միենոյն բանը պիտի տեսնենք, և այդպէս ալ պիտի ըլլար: քանի որ Հայն ալ երկրագործ ժողովուրդ մը եղած է և մեր Հայաստան աշխարհն ալ չափաւոր բայց այլազան Պլորայով մը օժտուած է իր այլազան կիմային համեմատ: Բնական է ամէն երկրի միենոյն ֆլորան չունի, որով ամէն բոյս ամէն երկրի ժողովուրդներու հաւասարապէս ծանօթ չպիտի ըլլար, ինչպէս նաև ամէն մարդու և անտի ամէն ազգերու դիտելու կերպն ալ նոյն եղանակ չըլլալով, հարկաւ իրենց տեսած ու ճանչցած բոյսերը միենոյն անունով չպիտի որակէին. բայց որքան ազգերու յարաբերութիւնները իւրարու հետ յաճախեցին, շատ բաներու հետ ծանօթացան նաև իւրարու երկրի բնականին — կլիմայ, բերք, բուսականութիւն: Ի հարկէ իրենց ճանչցած ժողովուրդներու անուանակոչումովը կամ թարգմանարար պիտի սորպէին ու ճանչնային այդ բոյսերն ալ: Այսպէս Հայաստան Աշխարհ Ցոյն, Հոռմայեցի, Արաբ աշխարհներուն որքա՞ն բոյսեր, պտուղներ չծանօթացուց և բուսանուններ չտուաւ: Առնենք, օրինակի համար ի գիրս թէ ժողովուրդին բերնին մէջ հաւասարապէս լուսած կապրցախբառը. կասկած չունինք թէ զուտ հայացի բուսաբառ

մ'է սա . գէթ զայն կազմող զախ բառը , որմէ կազմուած բուսաբառեր կամ առանձին գործածութեամբ՝ կը լսուին այսօր աւ Դաւառալեզուներու մէջ , (տես ջղացնի և զախ) . արար . թուրք . պարսիկ . լատին կամ Փրանսերէն լեզուներուն մէջ ալ այդ բոյսի անունի մէջ կը լսուի կապար բառը ինչ ինչ եղանակաւորումով , և զախ կամ ենի-ին համապատասխան այդ լեզուներու յատուկ մասնիկի ածանցումով : Առնենք դարձեալ Երնջայ , Երնջան , Երնջակ , Երնջակառ . ի գրոց և Երիթնայ , Երժնուկ , Երնջանուկ ի բրոց , որուն մէջ Երինջ բառն է որ կը լսուի . նոյնը կը լսուի նաև լատիներէն և Փրանսերէն անուններուն մէջ . Erynge , Eryngium . և որովհետեւ այս բոյսս իր որձ և եզ տեսակները ունի , որձ Երնջային համապատասխանող թրքերէն անունին մէջ — պուղա թիմենի — կը հանդիպինք Երինջին որձը պուղային (լնճուղ , ցուլ) անուանակոչումին : Ինչպէս այս բուսաբառիս կարգին ըսինք , ժողովուրդը բոյսերու անուանակոչումին մէջ փափկանկատութիւն չի դներ , և ցուլի մը ծննդական այդ անդամին ու բոյսին միջն ամենայն գիմօք աղերս ու նմանութիւն տեսնելով այդպէս ալ կոչած է : Ծիրանի (abricot) ռամկերէնը Պարկուկ , մասնաւորապէս կը լսուի ի Սվազ . Ամիրտվուաթ ալ այդ անունվ յիշած է , և արաբերէն ալ այդպէս կը կոչուի . լեզուարան մը ըլլալու հարկ չկայ հաստատելու համար թէ Պարկ բառէն և նմանողութիւն ցուցնող ուկ մասնիկէն ածանցուած է . ուստի և զուտ հայերէն բառ մ'է . և չէ՞ որ Հռոմայեցիք ալ միզով ճանչցած այդ համեղաճաշակ պտուղը և Հայկական սպլոր — prunus Armeniaca կամ լոկ Արմենիակա անուանեցին զայն : Ծոյն , լատին , արաբերէն կամ Փրանսերէն տարազին տակ քոլարկուած բուսաբառերուն մէջ իրարմէ փոխ առած որքան այսպիսի բառերու կը հանդիպինք վեր ի վերոյ քննութեամբ մը :

ԿԱՐԱՊԵՏ ԳԱՅԻԿԵԱՆ

(Ծարունակելի՝ 1)

ԲՆԿԵՐԱՅԻՆ

ՄՏԱՄԵԼՈՒ ԱՐՈՒԵՍՏԸ

Սկեռուն ակնարկ մը աշխատութեանս սենեակի պատուհանին ապակեայ փեղկին՝ ինձի խորհուկ կուտայ թէ իմ մտածումներս կը խառնուին այն պատկերներուն , որոնք նկարուած ըլլալ կը թուին փեղկին վրայ : Ապակիի բիւրեղէն կը նշմարեմ նախ պատուհանի վանդակներուն երկրաչափական ձեւերը , յետոյ անոնցմէ անդին կանաչ ալիքները անտառներուն և գաշտերուն , պարուրուած առտուան կապոյտ և անգայտ մշուշին մէջ : Հորիզոնին վրայ կը բարձրանայ շարքը բլուրներու , իսկ լերան անտառուտ կողին վրայ հեռաւոր հիւանդանոցը կ'երեսի , Ֆլորանթինեան վանքի մը նման , շրջանակուած թուի նոճիներով : Ծիծեռնակներու երամը կ'անցնի տժոյն երկնակամարէն , ամպերու խիտ քոլէ մը ծածկուած : Հեռուն քանի մը օգանաւեր կը սաւառնին , բերելով ինձ պատերազմի և ոռումբերու յիշողութիւններ , գիշերին մէջ ոռնացող յուշկապարիկներու նման : Յետոյ մէկէն կը մոոցուին կանաչ տեսարաններու շարքերն ու թռչուններու երգերը և կը տարուիմ մտածելու քաղաքակրթութեան մահուան , և անցեալ կործանութերու և մեր օրերու ճակատազրին :

Այսպէս իմ մտածումներս կը ըլջին ոչ միայն ներկայ իրողութիւններու չուրջ , այլ նաև կ'երթան հեռաւոր աշխարհներու , վերբերելով անցեալ իրազարձութիւնները և պարզելով տեսութիւններ անստոյդ պագայի նկատմամբ : Միտքս ներքին աշխարհ մը կը թուի ըլլալ ուր կ'արտացոլայ արտաքին հակա տիեզերքը , առանց ժամանակի և միջոցի սահմանին : Իմաստասերները յաճախ փոքրիկ տիեզերք կը կոչէն մեր միտքը , համեմատելով զայն մեծ և անսահման տիեզերքին հետ : Փոքրիկ տիեզերք մը որ իր մէջ կրնայ խացնել սակայն այն բոլորը , որ գոյութիւն ունի մեծ տիեզերքին մէջ :

Միտքս սակայն շփոթութեան կը մտնըւի , որովհետեւ հայելին և անոր մէջ պատ-

կերացող առարկաները, այսինքն մեծ ու փոքր տիեզերքները շարունակական շարժումներ, մէջ են։ Առջևս պարզուող պատկերը ծառերուն, թռչուններուն, բլուրներուն և հորիզոններ կը թուի յատակ, սակայն յիշատակներս, գատումներս, զգացումներս, սխալներս կը խեղաթիւրեն մտածումս։ Մեր մտքին մէջ աշխարհը կը նմանի քարտէսի մը՝ որուն սահմանը շփոթուած և եղրերը յարափոփոխ են, և զոր կարելի չէ մայուն կերպով գործածել։

Յստակ կերպով մտածելու փափաքը մեզ կը մղէ զգուշաւոր փնտուտուքներու, սակայն գործելու անհրաժեշտութիւնը լսափողական է։ Պղտիկը հիւանդացած է, ի՞նչ է հիւանդութիւնը, որո՞ւն խորհուրդ պէտք է հարցնել այս պարագային, բժիշկը կը նաև օգտակար ըլլաւ, բժիշկը զիտութեան մարդ է, սակայն ի՞նչ է գիտութիւնը, ամբողջ կեանք մը հազիւ թէ կարենոյ պատասխանել այս վերջի հարցումին, անոր համար մենք կը գործենք ընել այն՝ ինչ որ պարագաները կը թելազրեն և ինչ որ անհրաժեշտ է ընել, առանց պատճառներու որոնումին և արդիւնքներու ուսումնասիրութեան։

Ինչ որ մտածում կը կոչենք ուրիշ բան չէ բայց մարդուն ենթադրելու և նախատեսելու ճիգը, իրարու խառնելով խորհուրդն ու պատկերները մտքին ու երեակայութեան։ Ճիշդ կերպով սակայն կարենալ գործելու համար, մենք պէտք է ջանանք ճիշդ խորհիւ, համաձայն Բասկալի։ Խոկ ճիշդ մտածելը, կը նշանակէ մեր ներքին աշխարհը պատկերել արտաքին աշխարհին համաձայն, կարելի ճշուութեամբ։ Եթէ օրէնքները մեր ներքին աշխարհին՝ ճիշդ նմանին արտաքին աշխարհին, եթէ մեր ներքին քարտէսը կարենայ մեզի առաջնորդել արտաքին աշխարհի մէջէն անսայթագ, այս պարագային կարելի է յուսալ թէ մեր մտածումները համաձայն են մեր գործին և մեր գործը համաձայն մեր պէտքին ու փափաքներուն։

Կա՞ն կերպեր որոնց միջոցաւ կարելի ըլլայ մարդուն հակալուել իր մտածումները այնպէս մը՝ որ իր գործերը գիւրին պատշաճին իրերու արդէն խոկ գոյութիւն ունեցող յօրինուածքին, կարելի՞ է գծել տիեզերքին քարտէսը իր ճշգրիտ սահման-

ներուն մէջ, անոր միջոցաւ կարենալ հասնելու ուղղուած նաւամատոյցները։

Մտածումները շատ յաճախ ուրիշ բան չեն բայց տիեզերքի իրերու և ապրու մարմիններու մէջ եղած յուշազրութիւնները, բնաղդի և կամ սովորութեան ձեխն մէջ։ Կատուն կը ցատկէ յարգարուած սեղանին վրայ, և հոն կը նստի չնորհալիորէն, առանց ճիգի, առանց կոտրելու գաւաթ մը կամ աղտոտելու սպաս մը։ Շարժումներու այս շարքը կը պահանջէ ոյժ և տեղի ճշշգրիտ ընտրութիւն և խնամեալ հաշուեառում մը, սակայն այս պարագայիս և ոչ մին եղած է զիտակցօրէն, կատուն կը մտածէ իր մկաններով և աչքերով միայն։

Նոյն ձեռվ թէնիս, գնդակ և սուրխաղցոլները կը խորհին իրենց մարմնով։ Սուրխաղցոլը բնաւ ժամանակ չունի մըտածելու իր հակառակորդին շարժումներուն համաձայն զիրք ճշգելու, անիկա կը մտածէ իր սուրին և մասներու մասին։

Իրարու յաջորդող մտածումներով չէ որ արձանագործը կ'որոշէ արձանին ազգը և կամարել, աչքերու ճշգումով իր ձեռքը ուղղութիւն կուտայ մարմարին։ Մարզիկին պէս արուեստագէտն ալ կը մտածէ իր մարմնով։ Կենդանիներէն շատեր կը մտածեն ուրիշ մարմնին շարժումներուն համաձայն։ Խուճապը երբ կը գրաւէ ամբողջ հօտը ոչխարներուն, իրաքանչեւրը կը վազէ և կը շարժի հօտին հետ միասին։ Կենդանին չի հասկնար խուճապին պատճուր, սակայն բնաղցով զիտէ թէ եթէ չշարժի հաւաքականութեան հետ, կընայ կեր ըլլաւ թշնամիին։ Կենդանիներու նման պատիկներ և ամրոխը կը շարժին բնաղցով և մարմնական մտածողութեամբ։

Երկու սիրողներ շատ յաճախ երկար անհամաձայնութենէն վերջ, տրամաբանական խօսքերով չէ որ կը հաշտուին, երբեմն քաղցը նայուածք մը, կամ մեղմացնող ժպիտ մը կը բաւէ որ անոնք իրարու գիրկ իյնան։ Խուճապը կը մտածէ միայն ոտքերով։ Օդանաւորզը ունի ճշգրիտ անդրագարձներ, որոնք ի վիճակի կ'ընեն զինքը ապահով գետին իջնելու։ Դիւանագէտ մը սակայն որ կանչուած է գարելու երկրի մը քաղաքական ու տնտեսական գործերը չի կընար մարմնով խորհիւ, նոյնիսկ չի կընար

մարզիկին պէս մտապատկերներով գործել, որովհետև այս վերջինները այնքան շատ են որ կրնան մոլորեցնել զինքը իր գործի պարագային։ Անիկա չի կրնար երկրի գործերուն ոմանց ի նպաստ և միւսներուն ի հեճռւկս խորհիլ, անիկա ստիպուած է դասակարգերու և խորհրդանիշերու վերածել այն բոլոր՝ որոնք ըմբռնելի են միայն բառերով։

Գործաւորը, ձեռնածուն, մարզիկը որոնք կը խորհին իրենց ձեռքերով, կը բռնեն առարկաներ որոնք ծանրութիւն և դիմադրութիւն ունին, իսկ անոնք որ կը խորհին բառերով, կը բռնեն զլիստորաբար ձայներ և խորհրդանշաններ, որոնք գործողութիւնը բացառաբար կը դիւրացնեն։

Պանդոկի մէջ կը վերցնէք հեռաձայնը և կ'արտասանէք «թէյ» բառը, քանի մը վայրկեաններու մէջ դուք ձեր տրամադրութեան ներքեւ կ'ունենաք թէյի վերաբերեալ բոլորը։ Մտածած է՞ք բարդ դժուարութեանց անոնց բոլորի գործնական պատրաստութեանը։ Երբ մտածէք թէ Զինացին կը մշակէ թէյը, հաւաքելով և զատելով անոր տերեւները, անգլիական նաւը կը փոխադրէ զանոնք, նաւապետն ու նաւազները զայն ապահով բերելու համար կը կոռուին փոթութիւներուն դէմ, և տակաւին թէյի կաթին և քէյքերու արտադրութեան համար որոշ և առանձինն աշխատութիւններ կը տարուին, և այս բոլորը մէկ բառով ձեր տրամադրութեան ներքեւ կը դրուին։

Ան որ կը մտածէ իր ձեռքերովը, սահմանափակ տղթեցութիւն մը ունի տիեզերքի իրերուն վրայ, գործելով այն իրերուն կատմամբ միայն, որոնց կրնայ հպիլ, իսկ մարզը որ կը խորհի բառերով, առանց ծիգի կրնայ շարժման ենթարկել ամբոխներ, բանակներ և երկիրներ։ Թող կառավարութեան պետը արտասանէ միայն «զօրաշարժ» բառը, անհրաժեշտ մարդերը զանազան անկիւններէն և տուներէն պիտի հաւաքուին գոհացում տալու այս անհրաժեշտ պահանջքին։ Ան կրնայ երկինքը լեցնել առումբեր արձակող օդանաւերով, կործանելու պատրաստ քաղաքներ, երկիրներ, և վերջաւորութեան բերելու քաղաքակըրթութիւններ։ Այսպէս երբ նկատի առնենք կարելի աղդեցութիւնը պարզ բառի մը, գիւրին է երեակայել թէ լեզուն ինչ մո-

գական ոյժ է եղած նախնական ժողովուրդներու համար։ Ֆառաւս Ալքիմիայի վերաբերեալ կին գիրքերուն մէջ կ'որոնէ հոգիները հալածել կարենալու ֆօրմիւլը։ Արաբական գիշերներու մէջ, «Աէզամ» բառը կը բանայ գոցուած զաղանի գուռները, ասիկա ճշմարիտ աւանդավիշէպ մընէ։ Բոլոր ընկերութիւններու մէջ կան բառներ որոնք գուռներ բանալու և ոգիներ հալածելու ոյժը ունին։ Ամէն խօսող իր սէզամ բառը ունի և իւրաքանչիւր յեղափոխականը կը մեկնի գլխաւոր բառէ մը, որ բանալին է իր զաղափարներուն։

Մարդը որ կը խորհի իր ձեռքերովը, կը շարժէ ծանր առարկաներ և կը տեղափոխէ զանոնք գանդաղօրէն, աղիւս առաղիւս յաջորդական զետեղութերով։ Ինքը ստիպուած է իր գործը ընել շատ խնամքով, կարենալ պահելու համար արտաքին և ներքին աշխարհներու ճշգրիտ հաղորդակցութիւնը։ Որովհետև եթէ ինքը ի գործ չգնէ կարելի այս զգուշութիւնը, փոխադրուող աղիւսները կրնան խորտակուիլ, ձեռնածուին գնդակները կրնան շփոթուիլ, և մարզիկը կրնայ վար իյնալ մարզանքի ձողերէն։ Սակայն զործողութիւնները բառուած մտածողին համար շատ զիւրին են։ Անիկա կ'առաջնորդուի խորհրդանշերով և կ'անգիտանայ սոսկալի հետեւանքները անոնց, Լայրնեցի ըսածին համաձայն, «բառներու յարդով կ'ապահովուի իրականութեան ցորենը», հաւատալով թէ ամէն բան կրնայ ըլլալ երբ բառերը ըսուին։

Դժուարութիւնը այն է որ իրերը գիւմարդութիւն ունին, ամէն բան կարելի է ըսել բառերով։ Նարոլէն Փ. ըսած է «Վէտք է յարգուին ազգերու սկզբունքները», եւ այս վերացական նախադասութիւնը պատճառ եղած է եւրոպայի կործանման։ Ծընտեսագէտ մը իր սեղանին առջև նստած կրնայ գրել «աւելցնել թոշակները կը նշանակէ աւելցնել գնելու ոյժը և հետեւաբար վերջ տալ տնտեսական տագնապին»։ Լաւու ճշմարիտ բառեր են ըսուածները, և տնտեսագէտը գրած է զանոնք բարեհաւատ կերպով։ Գործնականօրէն սակայն այս բառերը վերջաւորութեան բերելու քաղաքակըրթութիւններ։ Այսպէս երբ նկատի անկանոնութիւնը ինչո՞ւ, որովհետեւ մեր ներքին փոքր տիեզերքը չի կրնար աղդել արտաքին մեծ տիեզերքին

վրայ, որ իրերու և առարկաներու մեծ աշխարհն է, որովհետև անհամերաշխութիւնը մը կայ բառերու և իրերու միջև, պարզ նախադասութիւնը մը չփ ներկայացներ բաւարար ճշգրտութեամբ բարդ կացութիւնը իրերու թագաւորութեան:

Վատանքաւոր և յոտի բան պլիտի ըլւար

նախադասութիւնը մը կամ տարագ մը արժեւորել համաձայն իր լաւ կամ ոչչ արդիւնքին:

Դատ բնական է որ քաղաքակարթութեան սկիզբէն ի վեր իմաստուն մարդեր որոնած են ուշագրաւ խորհրդանշեր:

Այժմու երթեւեկութիւնը կանոնաւորելու նման, մարդիկ միշտ փորձած են կանոնաւորելու շրջանառութիւնը բառերու,

զոր տրամախոհութիւն կ'անուանենք: Ինչ որ մարդկային գատողութեան օրէնք կը կուենք, օրէնքն է մտածողութեան, վաւերական բոլոր մարդոց, ամէն տարիքի մէջ:

Բացորոշ է օրինակի համար, երբ կ'ըսենք թէ բան մը որ ինքզինքին կը պատկանի, չի կրնար ուրիշին պատկանի:

Մէկը չի կրնար նոյնատեն եղածացնել թէ երկու երկու ալ կ'ընէ չորս և թէ երկու երկու ալ հաւասար է հինգի, կամ այս զգեստը թէ ճերմակ է եւ թէ սեւ:

Երկար ատեն մարդիկ կը յուսային գտած ըլլալ սիալներ ճշտող մտքի քերականութիւնը մը, հիմունած որոշ սկզբունքներու վրայ:

Այս գատողութիւնը Արիստոտէլէն կուգար, Միջին գարուն Դպրոցապաշտ իմաստասէրներէն որդեգրուած, այս կարդի կանոն մը ոչ միայն խոտելի չէ ալ անհրաժեշտ, ապահովելով մեր գատողութիւնը կարգ մը զրիպանքներէ, սակայն չի կրնար հաստատել մտածելու արուեստը:

Տրամախոհութիւնը ստեղծագործ չէ, ան մնայուն կերպով կը կրնէ թէ Ա. Ը.

Է. իսկ եթէ փորձէ յաւելում մը՝ զայն փոխ կ'առնէ կամ փորձառութենէն և կամ յայտնատեսութենէն, երկու պարագային ալ գուրսէն տարրեր ներմուծելով:

Տրամախոհութիւնը կ'արտօնէ մեզի ըսելու, թէ այս զգեստը զգեստ է, միայն փորձառութեամբ կրնանք գիտնալ թէ զգեստը զիւրածալ է կամ ոչ:

Քանթէ կը խուսափի այս իրողութենէն միամտօրէն կարծելով թէ զուտ բանականութիւնը կրնայ յառաջանալ առանց փորձառութեան: Բանականութիւնը իր գիտութիւնը ընդլայնելու կիրքին մէջ, վստահ

իր կարողութեան, կ'երեակայէ անհունի տարածութիւնը որ կ'ընդլայնի իր առջե:

Աղաւնին որ արագօրէն կը կարէ օդին միջոցը և կը զգայ անոր զիմագրութիւնը, կը խորհի թէ աւելի լաւ պլատի թափ պարապին մէջ:

Այսպէս Պղատոն արհամարհելով ֆիզիքական աշխարհը, որ այս կարգի նեղ սահմաններու մէջ կը պահէ բանականութիւնը, կը միտի պարապ միջոցէն անդին գտնել զուտ հասկացողութիւնը, և չանդրագունար թէ այսկերպով ոչ մէկ յառաջիմութիւն կ'ընէ, հակառակ իր ճիգերուն, իրեն կը պակսի ամուր կոռւանը որ իր ժտածումը շարժումի գնելու պիտի օգնէր:

Մեր քաղաքական կարգ մը բարեկարգիչները ի զուր կը տարութերին պարապութեան մէջ, ի խնդիր զուր կը տարութերին պարապութեան մը:

Տրամախոհութիւնը ճկուն կ'ընէ մարդոց միտքը, անոր ընծայելով իրեն պակսած դիւրաշարժութիւնը, միւս կողմէն սակայն անոր ընծայելով վտանգաւոր դիւրահաւատութիւնը մը թէ տրամախոհութեամբ կարելի է հասնիլ ամէն կարգի ճշմարտութեան: Իմաստափրութեան վարդապետութեան պատմութիւնը կը յայտնէ թէ, դարերու ընթացքին, մարզը ի վիճակի եղած է զրիթէ ապացուցանելու ամէն ինչ: Ապացուցնելով ճշմարտութիւնը և անոր հակառակը նոյն ատեն, կամ ապացուցանելով ցեղերու զանազանութիւնը եւ ընդհակառակն անոնց միախառնումը:

«Բոլոր ապացուցները», կ'ըսէ Փրօփ. Ալէն, ինձի համար իրապէս վարկէ զուրկ են: Կարելի է ամէն ինչ ապացուցանել եթէ գործածուած բասերը յատակ և ճշգրիտ չեն: Աղձէպրայի խնդիր մը անհերքելի է, որովհետեւ իւրաքանչիւր եղբը այնքան ճիշդ է, որ ինդիր լուծողը չի կը ընթար ունկընգրողին հասկացողութենէն անդին բաներ ըսել: Տրամախանական նոյնութիւնները իրականութիւններ են, սակայն բառերը որոնք կը գործածուին զգացական խօսքերու մէջ, կառավարական վարչածեւն և տնտեսութեան մասին, անորու բառեր են, որոնք նոյն փաստարկութեան մէջ կրնան գործածուիլ զանազան նշանակութիւններով:

Որպէս աղքատորէն ընտած բառերով, կը նմանի գործածել

երկու տարրեր չափանիշեր նոյն ծանրութեան համար :

Կարտիսեան մեթոսը փորձ մըն է տարշանելու կարգ մը սխալներ այս կարգի մտածողութենէն : «Զօրաւոր փափաք ունիմ», կ'ըսէ Տէքարթը, գիտնալու թէ ինչպէս պէտք է զանազանել ճշմարիտը սուտէն, որպէսզի կարենամ յստակ և ապահով ընթանալ կեանքի մէջու : Յատկանշական են իր մտածելու արուեստին յայտնի օրէնքները : Առաջին, ընդունիլ բանի մը իրական ըլլալը այն ատեն միայն՝ երբ մեկը յստակօրէն կը նանչնայ զայն իբր այդ : Զգուժ ըլլալ անապարանէն եւ նախապատրումէն :

Զգուշանալ պէտք է աճապարանքէն, որովհետեւ մարզիկ չեն կրնար դժուար բաները զիւրին կերպով հասկնալ : Ուսանողները երբ կը ցատկեն գասագրքերու էջերուն վրայէն, չեն կրնար սերտել երկրաչափութիւնը : Սակայն մարդիկ առհասարակ աճապարանքի մէջ են : Պետական տեղեկագիրները, քննութիւնները, միշտ որոշուած օրին կը զրկուին իրենց հասցէին, նախընտրելով յաճախ թերի տեղեկագիր մը, քան ուշացումը անոր : Թերթի թղթակցութիւնները ժամ մը առաջ կը փութացուին հրատարակութեան գրուելու, կարեորը հարցին ամբողջական ու ճշգրիտ ըլլալը չէ, այլ տեղեկութիւնները վայրկեան մը առաջ հասարակութեան հասցնելու ճիզը :

Ուրիշներ կ'աճապարեն իրենց ունայնամութեան պատճառաւ : Չեն ուզգեր ընդունիլ իրենց անդիտութիւնը : Մասնագէտ մը ինքնքինքը անարգուած կը զգայ եթէ ըսէ թէ այդ մասին յետոյ ձեզի կը հազորդեմ : Պետութեան, ընկերութիւններու և զանազան զրաղումներու պարագային, մարդիկ առհասարակ հեղինակօրէն կը խօսին գործերու շուրջ՝ որոնց բաւարար չափով ծանօթ չեն : Մին ձեզի կրնայ խօսիլ Զեխոսուզավագիոյ մասին, առանց երբեք հոնեղած ըլլալու և կամ երկրին պատմութիւնն ու կեանքը գիտնալու : Մին կրնայ օդանաւային գործերու մասին խօսիլ քեզի, առանց տեղեակ ըլլալու հարցերուն, և ուրիշ մը տակաւին որ քեզի պիտի պատմէ կնոջ մը ներքին կեանքէն, առանց ստոյգ բան մը գիտնալու այդ ուղղութեամբ : Եթէ առանց ստոյգ և ամբողջական տեղեկու-

թեանց համբերութիւն ունենաք սպասելու, և կամ ըսելու թէ «չենք զիւրեր» և կամ ինչպէս կուտութիկոս ժԴ. սովոր էր ըսելու «պիտի նայիմ», այդ պարագային ծիծաղելի և կոպիտ սխալներ չենք գործեր և քայլ մը աւելի մօտեցած կ'ըլլանք կարտիսեան իմաստութեան :

Աճապարանքը միակ պատճառը չէ մեր սխալնքին, կայ նաև նախապաշարումը : Մենք յաճախ կը մօտենանք հարցերուն մեր ընտանեկան և կուսակցական զգացողութեանց ընդմէջէն, մեր տրամադրութիւնները, ժառանգութիւնը, և գաստիարակութիւնը մեծապէս կ'աղգէն մեր մտածելու կերպերուն վրայ : Թերթին մէջ մեր պաշտած քաղաքական մարդուն դէմ եղած քննադատութիւնը երբեմն կը զարացնէ և յաճախ կը յուսահատեցնէ զմեզ իր նկատմամբ :

Տակաւին մեր անձնական շահը, ուրիշ նախապաշարումի առիթ մը մեղի համար : Բասքալ ըսած է եթէ երկրաչափութիւնը մեզի յուզէր այնքան որքան քաղաքականութիւնը, պիտի չկրնայինք զայն ճիշդ կերպով արտայայտել : Քիչեր կան որոնք իրենց գէմ եղած դժուարութիւններու պատճառը իրենց ներսը որոնել ուզեն :

Երբ բժիշկ մը չի յաջողիր իրենց յատուկ բժշկական դարմանումի մը պատճառաւ, փոխանակ ատոր թերթին իր մէջ փնտուելու, հասարակութեան կը վերազրէ զայն կամ իր պաշտօնակիցներու վերաբերմունքին : Նոյն է պարագան ուսուցիչներու և գործատէրերու, որոնք իրենց գործին անյաջողութեան մէջ միշտ ուրիշին մատրտեսնի կ'ուզին : Ամէն ինչ որ գոհացում կուտայ մեր փափաքներուն և շահերուն ճիշդ է, այլապէս թերթի : Երբ սէրն ու ատելութիւնը մարդուս մէջ հակակչոի կ'ինթարկուին մեր միտքը կը գտնէ կարելի կերպը արդարամտութեան, և մենք չենք ստիպուիր ամէն օր տեսակէտներ փոխել համաձայն մեր զգացումներուն և անոնց յագուրդ տուող միտումին :

Ուսանք կը կարծեն թէ իրենք ազգեցութեանը տակ չեն իրենց ըրջապատին, որովհետեւ իրենք իրենց կեանքով ապօտամբ են արդէն անոնց : Սակայն ապստամբութիւնը երաշխիք մը չէ անկախութեան, ընդհակառակն նախապաշարումի գործ է

ՅԱՅՎԱԿԱՆ ՎԱՆՔԵՐ

ԿԱՅԻՓՈՍԻ Ս. ՅԱԿՈԲ ՄԾԲՆԱՅ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՎԱՆՔ

ՏԵՂԱԴՐԱԿԱՆ. — Երզնկա քաղաքէն երեք ժամ հեռու, Գոհանամի ստորոտը, Շողակաթ լերան զափվերին վրայ կառուցուած է Կայիփոսի Վանքը, որ շատ անգամ կոչուած է Նաեւ Գարոսի Անապատ, Դայիբոսի Վանք, Կապոսոյ Վանք, Կափոսի Մենաստան, ևն։ Ըստ Գրիգոր Դարանաղեցիի, Կայիփոսի կոչուած է տեղւոյն պատճառաւ, որովհետեւ վանքը «կայ ի փոսի» (Ժամանակագրութիւն, էջ 512)։

Գարեգին Վրդ. Սրուանձտեանց մէկ քանի տողով անցողակի կը յիշատակէ Կայի փոսի Ս. Յակոբայ Վանքը, Թորոս Աղբարի թ. Հատորին մէջ. «Ճուրն, օգն, արօտն հիանալի և սառն. գեղեցկակերտ է Ս. Տաճարն, յորում կայ փոս մը ջրհորի ձեռվ, ուր կը ճգնէր եղեր Ս. Յակոբ. յաջմէ խորանին առիւծ և ի ձախմէ եզն, քարակոփ՝ խոյակաց վրայ» (էջ 51)։

ապստամբութիւնը ինքնին. Գրող մը որ իր մանկութեան մեծ չափով ենթարկուած է կրօնական և ընտանեկան ազգեցութիւններու, և յետոյ իբրև ազատ մտածող յարձակման կ'ենթարկէ զանոնք, իր ապստամբութիւնը գերիի մը արարքէն անդին չանցնիր։ Բոլոր մեծ բարոյախօսները կը զգուշացնեն զմեզ ազատ պահելու մեր դատողութիւնը կիրքերէն։ Կազմակերպել ու կարգաւորել մեր մտածումները պարզէն մինչև ամենէն բարդերը, բաժնել հարցերը այնքան մանրամասնօրէն, որքան կարելի է։ Զեր թըւումներու պարագային եղէք ամբողջական և ձեր քննութիւններուն մէջ այնքան ընդհանուր, որպէսզի վստահ ըլլաք թէ ոչ մէկ քան զանց առնուած է։ Այս կերպը շատ օգտակար եղած է թէ Տէքարթին և թէ անկէ վերջը եկող գիտնականներուն։

Ա. Մ.

(Շարունակելի՝ 1)

Կայիփոսի Վանքը ունէր վեհ ու պատկառելի գիրք և լրջապատուած էր քարաշէն, ամուր պարիսպներով, կը գրէ Գ. Սիւրմէնեան. — Երզնկա, 1947, էջ 97։

ՊԱՏՄԱԿԱՆ. — Կայիփոսի Վանքին վերաբերող պատմական յիշատակութեան մը կը հանդիպին քիչ գեղագութիւն ու կիզը թէ 1425 թուին Ամթայ տէրը եկաւ Երզնկայի վրայ և հրդեհեց ու աւերեց աւաններն ու վանքիրը, որոնց կարգին և հոչակելի Կապասուու Մենաստանը։ Քաղաքը երեք տարի պաշարուած պահեց և ապա հեռացաւ, որմէ յետոյ գաւառը սկսաւ վերստին ծաղկիլ և Կապոսի Վանքն ալ առաջուածնէ աւելի պայծառ շինուածով նորոգուեցաւ (Զարք., Նոր Դպրութիւն, էջ 153)։

ԺԶ. գարուն սկիզբը, Գրիգոր Վրդ. Մշեցի շինած է Կապոսու հարաւային ժամատունը և չորս խուց, գործակցութեամբ իր աշակերտին՝ ՄաղաքիաՎրդ. Դերջանցիի. — Հանդ. Ամս. 1948, էջ 540։

Կայիփոսի վանահայրելէն սակաւաթիւ անուններմիայն յիշատակուած կը գտնինք, որոնք են։

1. — Սամուկի, 1255. — Ասոր հրամանով Գրիգոր Գրիշ Վղիկ օրինակած է ձառնութիր մը։

2. — Տէր Ներսէս Պաբունապես Համեկնցի, կը յիշուի 1495—99 թուականներուն. — Սարգ. թ. էջ 622; թ. Աղբար, թ. էջ 328 և 305; Գր. Դար. էջ 405; Սարաւատ 1913 էջ 601; իր մասին Երզնկացի Մեսրոր Գրիշ կը շարէ հետևեալ տողերը.

աԵԼ Տէր Ներսէս Առաջնորդի, Աղնուական ի մեծ տոհմի, Առոր և մաքուր յոյժ գովիլի, Որ հրեշտակաց է բաղձալի։ (թ. Աղբար, թ. էջ 328): Իր օրով վանքը ունէր երեսունէ աւելի արեղաներ (թ. Աղբար, թ. էջ 305): Վանքին դասակալն էր մեծ և քաջ բարունապետն Յովհաննէս, որ կը վախճանի 1497 թուին։

3. — Պարունակ Մկրտիչ, 1534ին, երբ Կայիփոսի Վանքը Կ'այցելէ Սրապիոն Վրդ. Մոկացի իր աշակերտներով հանդերձ. — Հանդ. Ամս. 1892 էջ 51։

Գր. Դարանակեցի Կայիփոսի Վանքին միաբաններէն կը յիշէ մի քանի անձեր, ինչպէս ՄաղաքիաՎրդ. Դերջանցիի աշա-

կերտ Աստուածատուր Վրդ. Սեբաստացի, վախճանած 1587ին (էջ 341), Աստուածատուր Վարդապետի աշակերտ Հայրապետ Վրդ. Տիւրիկցի (էջ 341), Շիրակ Վրդ. Ամթացիի աշակերտ Պետրոս Պիչուղ, որ «կտարեալ ժամանաց երաժիշտ էր և տուժարագէտ և արագախօս և խրսխտ և ահարկու բարձրաբարբառ քարոզող» (էջ 406), վախճանած 1591ին (էջ 407), ուրիշ վարդապետ մը, Արոգայթ Կոչուած, նոյնպէս վախճանած 1591ին (էջ 406-7),

Երևանակամի միաբան Մահակ Եպիսկոպոս, 1689ին, Կայիփոսի Վանքին մէջ վարդապետ կը ճեռնազրէ Աւետիք Եւղոկացին. — Միաբ. էջ 436:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ. — Կայիփոսի Վանքը զուրկ չէ եղած մշակութային կեանքէ: Դարանալեցիի համաձայն Կայիփոսի Վանքը եղած է «Դաստուն վարդապետաց» (ԺՄ. էջ 512): Մեզի հասած գրչագրական աշխատանքները՝ կը բաւեն վկայելու թէ Կային հոն ջանակը ձեռքեր, որոնք հայ գրի ծառայութեան էին նուիրուած: Անոնց մէջ ժամանակով հնագոյնն է,

Ա. — Վարդան Քահն, Կապոսի, Մաղկող, որ օժանդակած է, 1224ին, Թաղէսու Գրչի և իր օգնականներուն ընդօրինակած ձառնանիրի ծաղկումին. — Հ. Թրգմ. էջ 729: Մարդ. Բ. էջ 33-34: Յիշտ. Զեռագրաց Ա. էջ 835:

Բ. — Գրիգոր Գրիէ Վզիկ, 1255ին օրինակած է ձառնանիր մը, Կապոսի Վանահայր Մամուէլի հրամանով. — Մարդ. Թ. 221.

Գ. — Յակովլոս Կրօնաւոր, 1270ին օրինակած է նարակնոց մը. — Հանդ. Ա.մս. 1938, էջ 102:

Դ. — Ներսէս Սարկաւագ, Գրիէ, աշակերտ Յովհաննէս Փիլիսոփայի. 1343ին օրինակած է նարակնոց մը. — Տաշ. Թ. 173:

Ե. — Մովսէս Կրօնաւոր, Մաղկող, եղբայր Յովհաննէս Փիլիսոփայի. 1343ին ծաղկած է Ներսէս Սարկաւագի օրինակած Շարակնոցը. — Տաշ. Թ. 173:

Զ. — Յակոր Դրսմեցի, Գրիէ, 1389-93. — Օրինակած է Ֆողովմածու մը 1389ին.

— Հ. Զ. Հիշտակարաններ, Լ. Ս. Խաչիկյան, Երեգան, 1950, էջ 580: Իր մասին տես անդ նաեւ էջ 603:

Է. — Գրիգոր Գրիէ, 1416ին օրինակած է Քարոզագիրք մը Գրիգոր Տաթևացիի. — Կար. Թ. 2069:

Ը. — Մանուէլ Չ Գրիէ, 1466ին օրինակած է Գանձարան մը. — Էջմիածին 1951 Ապրիլ-Յունիս, էջ 88: Յիշտակառած «գրոց աշակերտոններուն մէջ կա Տէր Մաղաքիա, որ թերեւ նոյն է վարդիշուած համանուն գրչին հաւ: Յիշտակարանին մէջ կը կարդացուի նաև Մամուէլ Նազաշի անունը, որ իրրեւ նկարող ծանօթ էր Երգնակայի ըրջանակին մէջ 1446-73 թւականներուն, և նկարած է Մանուէլ Երէցի օրինակած մէկ Աւետարանը. — Թ. Աղբար, Բ. 420:

Թ. — Հայրապետ Գրիէ, 1496ին օրինակած է Ապրիլ մը, Տէր Կիրակոսի համար. — Թ. Աղբար, Բ. էջ 305:

Ժ. — Մեսրոպ Գրիէ Երգնակացի, որդի Ամբրովլաթի. 1499ին օրինակած է Աւետարան մը. — Թ. Աղբար, Բ. էջ 328:

ԺԱ. — Տէր Սիմէոն Խարբերդցի, Նաղաշ, 1499ին ծաղկած է Երգնակացի Մեսրոպ Գրչի օրինակած Աւետարանը: Գրչի յիշտակարանին մէջ իր մասին կը կարդանք հետեւալ գովասանական տողերը.

«Ել և զնաղաշն գովելի, զՏէր Սիմէոնն Խարբերդցի, Որ զարդարեաց ծաղկաւք իլի, գոյն զգունով զարմանալի»: (Թ. Աղբար, Բ. էջ 328):

ԺԲ. — Խայտառը Սքեղայ, Գրիէ, 1495ին օրինակած է Ռոկբորիկ մը. — Մարդ. Թ. 241:

ԺԳ. — Մաղաքիա Գրիէ, 1497ին օրինակած է:

1. — Առ Առ Ճառք, Գրիգոր Նաղիանցի, և Յաղագ Երկինային Քահանայապետութեանց, Գ. Արիսպագցիի. — Կար. Թ. 92:

2. — Աւետարան, մաքուր բոլորգորով, Մկրտիչ Սքեղայի համար, «որ մականուն Տանձիկ ասիր». — Զեռ. Ս. Յ. Թ. 298:

ԺԴ. Յովհաննէս Վարդապետ, Գրիէ, 1497ին օրինակած է Գր. Նաղիանցացցիի ծառերը, Առ Առ, և Կիւրեղ Աղեքանդրացցիի Պարապմանց Գիրել. — Կար. Թ. 89:

ԺԵ. — Ալեքսիանոս Գրիէ, ծառայ Մրապիոն Վրդ. Մոկացիի. օրինակած է 1534ին, Կայիփոսի Վանքին մէջ, իր վարդապետին համար, Քարոզագիրք մը Գր. Տաթևացիի. — Հանդ. Ա.մս. 1892, էջ 51-2:

Ն. ԵՊՍ. ՄՈՎԱԿԱՆ

ԵՐՐՈՐԴ ՏԱՐԵԼԻՑ ԵՐՉԱՆԿՈՅՑԻՇԱՑՈԿ

Տ. ԿԻՒՐԵՂ Բ. ՊԱՏՐԻԱՐքի

Ա. Արուսոյ Եղանակայիշառակ Տ. Կիւրեղ
Ա. Պատրիարքի երրորդ տարելիցին առին, Ա.
Խակորիանց Մայր Տաճարին մէջ կատարուե-
լու հանդիսաւոր հառածայն Ա. Պատրիարք:
Պատարացից և բարգաց Գիր. Տ. Սղիչ Ա.
Խեթան. Տեռէրեան: Գիր. Արքազանը Եղանի
ու ունից իշտանի ի Սիօն բնարանով անդրա-
րանու Հանգուցեան Պատրիարքի կեանին ու
որդունեարեան եւ ի միջի այլոց բառ:

Ամենազդուար բաներն մին ալ այս
կեանին մէջ բարի իշտանի բոլուլ, եւ
երախսիք ունենալն է մարդոց սրին մէջ:
Երէ նայիք ձեր ուուրջը պիտի նկատէ ուու-
ռու թէ անհուն և բիւր անոնց, որոնք խոփի
պէս կ'ապրին, եւ տակաւին ծաղիկ շբացած
և պուղ չտուած կը բարեամին եւ հոգի իր
հոսանքին մէջ առած անոնց անպէս մեա-
ցուզները կը բեկ ու կը տանի անկուրեան
անդունին ի վար:

Հասեր գիտակցուրինն իսկ չունին կեան-
ին եւ անու մեծ խորհուրդին: Անոնք կը
ծփան ժամանակի հոսանքին մէջ, նման զուրի
այինքներուն վեայ տարութեռուող տաւելինե-
րուն, առանց գիտալու թէ ուր կ'երան:
Անզուր ժամանակը կ'առնեն անոնց գեղեց-
կուրինը, ունեն ու բարմուրինը, վերածե-
լով զիւենն ստեղ ու ունայն իմեակներու:

Ապրիլը լոկ ընչել մը չէ եւ կամ ակռախի
կոխի մը ի խնդիր մարդուն նիւրական գո-
յուրեան: Ապրիլ իր մեծ եւ բարձրազոյն ի-
մաստին մէջ՝ զարձակցիլ և կասուծոյ, բերե-
լով իր բաժինը կեանին մէջ իրազուծուած
արձեկներու մեծ զանձարանին: Բոլոր անոնք
ու չեն զիսէր ստեղծել զանզուրեան մեծ ար-
ուեստին մէջ, կը նմանին աւանդուրեան
կոյեւուն, որոնք նասած Տաճարի դուներուն
առջեւ, կը սպասէին Տիրոջ որ պիտի զար
իւնեց աշենքը բանալու: Տէրը եկաւ ու ան-
ցաւ, առանց իրենց լուր ունենալուն, եւ
Տաճարի պղնձեայ գոնեւուն գոցուեին վերջ
միայն անոնք հասկցան թէ կորսնցուցած էին
բանկազին պատեհուրինը կեանին հրատէին:

Ասուած իր գերազայն ստեղծագործու-
րինը, մարդկային փրկուրեան իրաւուք, ի-

րազործեց մարդով, Յիսուս Քրիստոսի: Ա-
րովինեւ առանց մարդուն՝ գոյուրիւն չունի
Ասուած եւ փոխադարձաբար: Ասուածա-
յին պատգամը երէ Երկինքներու վրայ ալ
գուաւ ըլլայ, ոչինչ կրնայ արժել, եւ կը
մնայ անազգեցիլ. անհրաժեշտ է որ ան ար-
աւայացուի մարդուն միջոցաւ: Ճեմարու-
րիւն եւ անձնաւորուրիւն, ահա այն Երկու
իրազուրիւնները, որոնցմէ մին առանց միւ-
սին ոչինչ կրնայ արժել:

Մարդը աւսանակն է Ասուածոյ լոյսին:
Ձեզի ծանօթ են պատմուրինն մարդեւ՝ որոնք
ժամանակի մուրին մէջ կեցած, լոյսի աւ-
սանակներ են եղած, իրենց մտին բարիքը
եւ սրին բաղցուրինը բաշխելով խաւա-
րին մէջ նսողներուն:

Երանաւունուն Տ. Կիւրեղ պատրիարքը, ո-
րուն մանաւան երրորդ տարելիցն է որ կը
կատարենք այսօր, երէ չեղաւ մտի մեծ ու
ըլլացուցիչ լոյս մը, եղաւ սակայն այդ
լոյսը յաւերծող նախանձաւոր հոգի մը,
լոյսին ի խնդիր աւանդապան ու զոհուող
հուրմ մը: Մեծ աւանդապան մը եղաւ ան,
նման այս Արուի այն մեծ նոզիններուն, ո-
րոնց գերազոյն նիդը է եղած անապարտ եւ
անայլալ պահել այս ժառանգուրեան կա-
րեիլ եւ հասկեալի իրաւունքը: Աւանդու-
րինը օսերու մտին մէջ զուցի աւելու-
դապատուրիանց համարծեկ, մեռած բանե-
րու գոյուրիւնն ու վերապրումը նեանակէ:
Ճեմարիս աւանդուրինը այս Հաստատուրեան
համար ուրիշ բան չէ, բայց կրօնական զեր-
մեռանգուրեան ողին, իմաստուրեան եւ ան-
նկուն բաղուրեան ողին, եւ հոգեւոր եւ ի-
մացական լուսաւորուրեան զործը:

Կրօնական այս Հաստատուրինը ինչպէս
կրնար չունենալ այդ երեսակ սրբուրիւն-
ները, երբ հոգեւոր կեանին հրատագործ ծա-
ռուն արմանները նոյն այն հոգին մէջ միջր-
եռած կը սնանին, որուն վրայ ասուածա-
յին Վարդապետը իր Երկաւոր առավելու-
րեան գերազոյն տարինները ապեցաւ:

Հաւատէի այդ սպասարկուները կրնային
միք Սիօնի այս բարձունքին վեայ պահել
եւ անցնել հաւատէին լոյսը, երէ չունե-
նային հոգեկան անբաժեշտ բաջուրինը,
պահպանելու նուիրական իրաւունքները,

մեր «փոքրիկ հօտին», հաւասեն ու Եկեղեցին արժեւորելով աշխարհի հօգուազդյան միւս Եկեղեցիներուն հետ առաջին նոյն զիծին վրայ։ Խակ առանց իմացական եւ հոգեւոր լուսաւորութեան զործին ի՞նչպէս կարելի պիտի ըլլար իմաստուն տեսեսները հանդիսանալ իմացական եւ հոգեկան այս ժառանգութեան։ Ս. Արոռոյ ձեռագիրներու հաւաքածոն ինքնին պիտի բաւեր գերազոյն փասր ըլլալու Հաստատութեան հոգեւոր ու մասուր կեանքին։

Ի՞նչպէս կրնային չըլլալ ու չպահուիլ այս բոլորը, քանի որ գարերով Հայաստան աշխարհի բոլոր ծայրերէն մեր ժողովուրդի

պատկերով իր համեստ նիգերը, զոհացուտ տալու այս ազգապարծան Հաստատութեան բազմապիսի կարիքներուն։

Յաւես անմոռանալի պիտի մեան այս Հաստատութիւնը սիրող իր յաջորդներու մքանին ու հոգիին մէջ, այն կորովն ու զոհաբերման ոգին, զոր ան ցոյց տուալ իր զանակալուրենեն առաջ, եւ յետոյ Պաղեստինի աղետի ընթացքին, երբ չարազործ ձեռքեր պահ մը ուղեցին վաճնզել Հաստատութեան կարգ ու սարքը եւ ապա գոյուրեան իրաւումքը։ Այդ օրերուն, անիկա մեր մեծ Եւանաւուն Հայրապետներու ոգիովն ու կո-



բարեպատ ուխտաւորութեան ալիքներ են հասեր հոս եւ բափեր կրօնական այս Հաստատութեան մէջ իրենց հոգիին զեղեցկագոյն գանձները։ Երէ հայիք այս Հաստատութեան պատերուն, պիտի սարսուան ձեր մասները, հաղորդուած ըլլալուն համար մեր մեծ նախնաց հաւասեքին։

Բազմերես և Երջանկայիշատակ Մրբազման երախտիքը ազգապարծան այս Հաստատութեանը մէջ։ Երբեւ ուսուցիչ, եւ տեսուչ մեր զոյգ կրարաններուն, իբրեւ լուսարարապես եւ արտաքին յարաբերութեանց մարդը եւ հուսակ ապա գահակալը այս Արոռին, անիկա բռաւ իր կարելին, յանախ բազմա-

թովովը ամրապինդ, զլեց անցաւ բոլոր արգելներն ու դժուարութիւնները, վերածելով ինքզինքը մեծ ու ամրակուռ վահանի մը՝ ընդդեմ թշնամիի հարուածներուն, եւ կամ նման այն նաւապետին, որ նաւու կողին վրայ բացուած ծակը գոցելու համար իր մարմինը զործածեց իբրեւ յսցան, փրկելու համար նաւը իր մէջիններով։

Երախտախառն զգացումով կենանք իր յիշատակին առջեւ, իբեն նման սիրելով ու պահպանելով այս ժառանգութիւնը, որուն կամաւոր նահատակը եղաւ ինքը, անոր ատանակին վրայ ինքզինքը բոլորանուէր այրելն յետոյ։

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐԱԷՆ

ԵԿԵՂԵՑ ԱԿՈՒՔ - ԲԵՄ ԱԿՈՒՔ

● Կիր. 5 Հոկտ. — Բարեկ. Վարազայ Ա. Խաչի պահոց: Ա. Պատարագը՝ Ս. Յարութեան Տաճարի մեր թ. Գողգոթայի վերնայարկ մատրան մէջ մատոյց՝ Հոգ. Տ. Ռուշաւան Արդ. Զջջանեան:

● Ուր. 10 Հոկտ. — Երեկոյեան Ժամերգութիւնն ու վաղուան տօնին նախատօնակիլ պաշտըցան Ս. Քաղաքիս Դպտոց Ա. Գէորգայ վանքին մէջ, նախագանութեամբ Գեր. Տ. Ռուրէն Արքեպս. Մանասեանի:

Համաձայն ընկալիեալ իրաւական կարգին և ըստ աւանդութեան, Միաբանութիւնս տարին մէկ հետ թափօրոգվ Գերթայ Դպտոց Ա. Գէորգ վանքը, տօնախմբելու համար սուրբին յիշատակը:

● Եր. 11 Հոկտ. — Ա. Գեղարք զօրավարին: Ա. Պատարագը՝ Դպտոց Ա. Գէորգ Եկեղեցւոյն մէջ մատոյց՝ Հոգ. Տ. Վարուժան Արդ. Գապարաննեան: Քարոզեց Հոգ. Տ. Միւռոն Վրդ. Կրճիկեան, անդրադառնալով օրուայ սուրբին կեանքին ու գործունէութեան վրայ, ներկայացնելով զայն իրը քայլա հաւատացեալ մը: Յաւարա Ս. Պատարագի, Միաբանութիւնը պատուասիրութեցաւ Դպտոց Ա. Գէորգայ վանքի Հոգ. Տեսչէն: Հանդիսաւոր երթ ու զարձին կը նախագանէր Գեր. Տ. Ռուրէն Արքեպս. Մանասեան:

— Կ. կ. Ժամը 2.30ին, Գեր. Տեղապահ Աըրքազանը ի գլուխ Միաբանութեան, մուտք դորձեց Ս. Յարութեան Տաճար: «Հըշաշափառյի հանդիսաւոր մուտքէն և Ա. Գերեզմանի ուխտէն ետք, թ. Գողգոթայի վերնամատրան մէջ պաշտըցան Երեկոյեան Ժամերգութիւնն ու Վարազայ Խաչի մեծահանդէս նախատօնակիլ:

● Կիր. 12 Հոկտ. — Վարազայ Ա. Խաչ: Առաւոտեան Ժամը 5.30ին, Գեր. Տ. Ռուրէն Ս. Եպութէմհանեանի գլխաւորութեամբ, Միաբանութիւնը մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար: Ս. Գողգոթայի վրայ ուխտի այցելութենէն ետք, մեր վերնամատրան մէջ պաշտուեցաւ առաւոտեան Ժամերգութիւնը: Կարճ զաղարէ մը ետք, մատուցուեցաւ հանդիսաւոր Ս. Պատարագ, Քրիստոնի Ա. Գերեզմանին վրայ: Պատարագեց Գեր. Տ. Ռուրէն Եպութէմհանեան, և քարոզեց, ըստարան ունենալով «Համբարձի զայն իմ ի լերինս, ուստի եկեղեց ինձ օգնութիւնս» պանծացնելով Վարազայ Խաչի տօնին Խորհուրդը, և ցոյց տալով Ս. Խաչը իրեւ օգնականը և լոյսը հայոց ազգին, զարերու փոթորկներու և ար-

հաւրալից պայքարներու խաւարին Ընդմէջէն: Դպրաց դասը, Գեր. Տ. Ռուրէն Արքեպս. ի ղեկավարութեամբ, կ'երգէր Եկմալեանի դաշնաւորած քառաձայն Ս. Պատարագը: Յաւարա Ս. Պատարագի, Միաբանութիւնն ու ժողովրդեան հոծքալմութիւնը, ինչպէս նաև Ս. Թ. Նախակրթարանի համայն աշակերտութիւնը, շքերթով վերադարձան Մայրավանք:

● Եր. 18 Հոկտ. — Ա. 72 աւակերտացն Քրիստոնի: Ս. Պատարագը՝ Ս. Յակոբեանց Մայր Տաճարի ներքին գաւթին մէջ մատոյց՝ Հոգ. Տ. Կիւրեղ Արդ. Գարիկեան:

● Կիր. 19 Հոկտ. — Ս. Պատարագը՝ Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ մատոյց՝ Հոգ. Տ. Օշական Արդ. Մինասեան:

● Ուր. 24 Հոկտ. — Երեկոյեան Ժամերգութիւնն ու Թարգմանչաց հանդիսաւոր նախատօնը պաշտըցան Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ: Արարողութեանց կը նախագանէր Գեր. Տ. Ռուրէն Ա. Արքեպիսկ. Մանասեան:

● Եր. 25 Հոկտ. — Ա. Թարգմանչաց վարդապետացն մերց: Հանդիսաւոր Ս. Պատարագը՝ Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ մատոյց՝ ըստ Ընկալեալ սովորութեան, կիւրկէնկեան Մատենազարանի Տեսուչը՝ Հոգ. Տ. Անուշաւան Արեգայ Զջջանեան: Քարոզեց Հոգ. Տ. Հայկազոն Վրդ. Արքականեան, «Որ զերկաւոր մեծութիւն փառաց խաւար կոչեց ցին ընարանով: Յաւարա Ս. Պատարագի, Գեր. Տեսչապահ Արքազանին նախագանութեամբ, կատարուեցաւ տարեկան հանդիսաւոր հոգեհանգիստը, Ս. Աթոռոյ մեծ քարերար Քալուստ Ոչէ կիւրկէնկեանի ձնողաց, ինչպէս նաև նորոգ հանդ, տիկնոջ հոգուոցն ի հանդիսաւոր Ապա, Գեր. Տեղապահ Արքազանին անուան տօնը ըլլալով, Միաբանութիւնը բարձրացաւ Պատրիարքարան, ուր հետզհետէ չնորհաւորութեան եկան նաև այլեւայլ ականաւոր ազգայիններ ու պետական բարձրաստիճան պաշտօնեաներ:

● Կիր. 26 Հոկտ. — Ս. Պատարագը՝ Ս. Յարութեան Տաճարի մեր վերնամատրան մէջ մատոյց՝ Հոգ. Տ. Հայկազուն Վրդ. Արքականեան:

Պ Ա Շ Տ Օ Ն Ա Կ Ո Ւ Ք

● Կ. 1 Հոկտ. — Առաւոտուն: Գեր. Տեղապահ Ա. Հայրը, ընկերակցութեամբ Հոգ. Եռողվական Հայրը, ընկերակցութեամբ Հոգ. Վարդապետ կատարեց Ս. Թարգմանչաց վարժարանի 1952-53 տարեցըանին: Այս առթիւ Վարժարանի սրահին մէջ հաւաքուած աշակերտութեան քաջարեական խօսքեր ըրաւ և օրհնեց զանոնք իրենց յառաջ տանելիք աշխատանքներուն մէջ:

• Եր. 4 Հոկտ. — Կ. վ. ժամը 4 ին, Գեր. Տեղապահ Ա. Հայրը, ընկերակցութեամբ Հոգ. Տ. Հայրիկ Վրդ. Ասլանեանի և Տիար Կարպիս Հին-դըեանի, ընդառաջելով եղած հրաւէրին, ներ-կայ գոնուուցաւ American School of Oriental Researchի տնօրէնին կողմէ սարքուած ընդունելու-թեան, իրենց զգբոցական ներկայ տարեցշանին բացման առթիւ Այցելութիւն տուաւ նաև Dr. Edwin Mall ի, Լուսերական Կազմակերպութեան Մեծաւորին, Augusta Victoria հիւանդանոցին մէջ։

• Կիր. 5 Հոկտ. — Կ. վ. ժամը 3 ին, Գեր. Տեղապահ Ա. Հայրը, ընկերակցութեամբ Հոգ. Տ. Հայրիկ Վրդ. Ասլանեանի, վանական գործերով մէկնեցաւ նոր երուսաղէմ և վերապարձաւ ԳՀ. 7 Հոկտ. ի Կ. վ. ժամը 3 ին։

• ԲՀ. 6 Հոկտ. — Առաւօտեան ժամը 8.30ին, ի զիմաց Գեր. Տեղապահ Ա. Հօր, Գեր. Տ. Սուրէն Ապս. Քէմհանեան, ընկերակցութեամբ Հոգ. Ժո-դովական Հայրերու, բացումը կատարեց Ժառ. Վարժ. ի և Բնծայարանի 1952-53 տարեցրջանին։ Գեր. Արքազանը զգացուած՝ ճառ մը խօսեցաւ ժառանգաւոր սաներուն, անգամ մը ևս շեշտե-լով արժանաւոր մշակներու կարիքը Հայաստան-եաց Եկեղեցւոյ համար մանաւանդ այս օրերուն։ Ապա Հոգ. Տ. Հայկազովն Վրդ. Արքահամեան, Նորընահիր տեսուչը Ժառ. Վարժ. ի և Բնծայարանի, Կարպաց Աւետարանի սերմանացանին առակը, յորմէ հետէ զասաւանդութիւնները սկսան ու-սուցական կազմին մէջ աւելցած նոր ուժերով։

• Կիր. 12 Հոկտ. — Երեկոյեան ժամը 7 ին, բաղաքիս Ալ-Զահրա պանդոկին մէջ Սպանիական Օրուայ Տօնին առթիւ սարքուած ընդունելու-թեան, ի զիմաց Տեղապահ Ա. Հօր, ներկայ զըտ-նըեցաւ Գեր. Տ. Սուրէն Ա. Ապս. Քէմհանեան, Ընկերակցութեամբ Հոգ. Տ. Հայրիկ Վրդ. Ասլան-եանի և Տիար Կարպիս Հինդլեանի։

• Կիր. 19 Հոկտ. — Կ. վ. ժամը 3 ին, վա-սեկան գործերով քաղաքու ժամանեց Յոպէի Ցեսուչ Հոգ. Տ. Բարգէն Վրդ. Ապատեան և վե-րապարձաւ Ել. 23 Հոկտ. ին։

• Կիր. 26 Հոկտ. — Առաւօտեան ժամը 9 ին, քաղաքիս Յոյն-Կաթոլիկներու Բարեսիբցա Ըն-կերակցութեան Տան բացման առթիւ, ընդառա-ջելով հրաւէրին, ի զիմաց Գեր. Տեղապահ Ա. Հօր, Հոգ. Տ. Պարզեն Վրդ. Վրթանէսեան ներկայ դուռըեցաւ գոհարանական Պատարագի մը և թէյասեղանի։

• ԳՀ. 28 Հոկտ. — Կ. ա. ժամը 9 ին, Գեր. Տեղապահ Ա. Հայրը, ընկերակցութեամբ Հոգ. Տ. Հայրիկ Վրդ. Ասլանեանի, վարչական գործե-րով մէկնեցաւ նոր երուսաղէմ և վերապարձաւ Աւր. 31 Հոկտ. ի Կ. վ. ժամը 3 ին։

Շ Ն Ո Ր Հ Ա Կ Ո Լ Ի Ք

Ենորհակալութեամբ սացած ենք, Ազն. Օր. Սիրափի Տէր Ներսկսեանի միջոցաւ, նետեալ նուերները մեր Ձեռագրաց Ցու-ցակի տպագրութեան ծախուց հաւողին։

Տ. Պ. ևն տուար 283
Տիկ. Լիպմանն » 50

Տեսուչ Ձեռագրատան Ա. Յակոբեանց
ՆՈՐԱՅԻ ԵՊՈՒ.

Լ Յ Յ Ո Տ Ե Ս Ո Ւ Ո Ւ

Օ Ր Ա Ց Ո Յ Յ

1953

Փ Ո Ւ Ա Կ Ա Ն Ի Ն Ք Բ Ի Ս Տ Ո Ս Ո Ւ

(ՀԱՅ ՀԻՆ ՏՈՍՏԻՐ)

Եւ

ԲՈՒՆ ԲՈՒԱԿԱՆԻՆ ՀԱՅՈՑ

ՏՆԻԹ - ՏՆԻԶ = 4445 - 4446

Եւ

ՏՈՄԱՐԱԿԱՆ ԲՈՒԱԿԱՆԻՆ ՀԱՅՈՑ

ՈՆԹ - ՈՆԴ = 1402 - 1403

ԵՐՈՒՍԱԼԵՄ

ՏԱԿՐԱՆ ՄՐՈՑ ՎԱԿՈՐԵԱՆՑ

Էջ. 208

Գիր. 100 Ֆիլս

«Սիմ» Խ ԽՄԵՍ.ԳՐՈՒԹԻՒՆԸ ԵԽ ԿԻՒՂՊԵՆԿԵԱՆ ՄԱՏԵՆԱԳԱՐԱՆ
ՇՆՈՐՀԱԿՈԼՈՒԹԵԱՄԲ ՍՏՈ.ՑՈ.Ծ ԵՆ ՀԵՏԵԿԵԱԼ
ՀՐՈ.ՑՈ.ՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՔՆՉՆ Է ՍՏԻՊՈՒՄ ՄԵԶ ԲԱՐԵՓՈԽԵԼՈՒ ՄԵՄՐՊԵԱՆ ԳՐԵԲԸ: Վարաստել: Նուիրատու:
ԱԲՈՒ ԼԱԼԱ ՄԱՀԱՐԻ: Ա. Խահակեան: Պէյրութ, տպ. Կ. Տօնիկեան (նուիրատու),
Տ1: Էջ 36:

ԼԵՐԱՆ ՈԳԻՆ: Սեւ Ոստ: Պէյրութ, տպ. Կ. Տօնիկեան (նուիրատու): 1951: Էջ 215:
ԳԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԱՐԱԲԵՐԵԿՆ ԼԵԶՈՒԻ: Պատրաստեց Շահէ Սբղ. Անշմեան (նուիրատու): Պէյրութ, տպ. Պրիմակ, 1951: Էջ 103 եւ Յաւելուած:

ՅԻՇԱՏԱԿԱՐՈՒՆՔ ԶԵՌՈԳՐՈ.Ց (Ե. Դարից մինչեւ Ժ. Դար): Հատոր Ա.: Գարեգին Ա.
աթողիկոս (նուիրատու): Անթիլիաս, տպ. Կաթողիկոսութ. Կիլիկիոյ, 1951: Էջ 1256:

Հետեւեալ 4 գիրքերը նուէր ստացուած են «Հանդէս Ամսօրեայ»ի Խմբագրութենէն:
ԵՒՐՈՊԱԿԱՆ ՓՈԽԱՌԵԱԼ ԲԱՌԵՐ ՀԱՅԵՐԻՆ ՄԵԶ: Հ. Աճառեան: Վիեննա, 1951: Էջ 185:
ՔՆՉՈՒԹԻՒՆ Ո. ՍԱՀԱԿԻ ՎԵՐԱԳՐՈՒԱՆ ԿԱՆՈՆՆԵՐՈՒ ԵՒ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ Է.
ԱՐՈՒ ՍԿԻԶԲԸ: Հատոր Ա.: Հ. Ներսէս Վ. Ակինեան: Վիեննա, 1950: Էջ 192:

ԱԻՄԷՈՆ ՊԴՆՉԱՀԱՆԵՑԻ ԵԽ ԻՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՎՐԱՑԵՐԵՆՔ: Հ. Ներսէս
Ա. Ակինեան: Վիեննա, 1951: Էջ 276:

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹԻՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԵԿ ՔԱՆԻ ՔԱՂԱՔՆԵՐՈՒ ԵԽ
ՔԵՐԵՐՈՒ ՄՈՍԻՆ: Հ. Պետրոս Տէր-Պողոսեան: Վիեննա, 1951: Էջ 133:

ՏՈՂՔ ԵԽ ԹԱՏՐԵՐԳՈՒԹԻՒՆՔ: Հատորներ Ա. Բ. եւ Գ.: Գ. Սիմոնօֆ (նուիրատու):
Հետեւեալ 4 գիրքերը նուէր ստացուած են «Արաբեր»ի Խմբագրութենէն:

ՀԱՇԻՇԻՆ (Պատմական Վէպ): Լեւոն Մեսրոպ: Փարիզ, 1939: Էջ 438:
ՄԱՏԱԹ ՐԵՒՄ (Թատերգութիւն): Լեւոն Մեսրոպ: Փարիզ, 1946: Էջ 109:
ՔԵՐՊԵԼԱՅԻ ԳԻՇԵՐՆԵՐԸ (Հէքեաթ եւ Վէպ): Լեւոն Մեսրոպ: Փարիզ, 1946: Էջ 172:
ԿՈՒԽԱՐԴՈՂ ԼԵՌԸ ԵԽ ՆԵՐԳԱՂԹՈՂ ՁԻՆ: Լեւոն Մեսրոպ: Փարիզ, 1949: Էջ 396:
ՎԻՃԱԿԱԳԻՐ ԽՆՈՒՄ (ՀԱՐՔ) ԳԱՀԱՄՈՒ ԵԽ ԹՈՆՏՐԱԿԵՑՈՑ ԱՋԱՆԴԻՆ ԵԽ ԲՈՂՈՔԱ-
ԿԱՆՈՒԹԵԱՆ ԿԱՊԸ Ի ԽՆՈՒՄ: Եղիշէ Յ. Մելիքեան (նուիրատու): Նիւ Եորք, 1943:
Էջ 32: (2 օրինակ):

Հետեւեալ 6 գիրքերը նուէր ստացուած են Տիգրան Մկունդէն:
ՄԵՐ ԿԱՌՈՎԱՐՈՒԹԻՒՆԸ: Տիգրան Սրիյր (Մկունդ): Նիւ Եորք, 1930: Էջ 95:

ԱՐՇՈՄ ԱՆՏՈՆԵԱՆ (Լուսափորագրի): Տիգրան Մկունդ: Նիւ Եորք, 1943: Էջ 43:
ՀԱՅ ԿԴԵՐՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԵԶ: Տիգրան Մկունդ: 1945: Էջ 143:

ՆՄՈՅՑ ՄԸ ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ԳՐԱԿԱՆ ՅԱՌԱԶԴԻՄՈՒԹԵՆէՆ ԵԽ ՅՈՒԵԼՈՒԱՆ «Հայ
Կղերն Ամերիկայի Մէջ» ԴՐՔԻՄ: Տ. Մկունդ: Աւինօքըն, Նիւ Ճըրսի, 1948: Էջ 80:

ՅԻՄՆԱՄԵԱԿ ՀԱՅ ԵՐԻՑԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ 1898-1948: Տիգրան Մկունդ: Աւինօքըն,
Նիւ Ճըրսի, 1950: Տպ. Կոչմակ, Նիւ Եորք: Էջ 64:

ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ ՊՈՂՈՍ ՄԱՐԳԱՐԵԽՈՆԻ ԵԽ ԶԻՒՐ ՀՆԵՍԱՆԻՔԻ ԱՆԴԱՄՈՑ
ՊԱՏՄԱԿԱՆ: Հրատարակեց Տիգրան Մկունդ: Նիւ Եորք, 1951: Էջ 240:

ԱՌԱՆՑ ՔԷՆԻ ԵԽ ՈԽԻ (ԶԵՌՈԳ ԶԵՌՈԳԻ ՏԱՆՔ): Գրիգոր Աֆարեան (նուիրատու):
Վէյրութ, 1946: Էջ 13: (2 օրինակ):

ՍՈՒԻՐԲ ՄԵԽՐՈՊ: Հրատ. Գր. Աֆարեան (նուիրատու): Պէյրութ: Էջ 32: (2 օրինակ):
ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ՊԱՏԿԵՐՆԵՐ: Պետրոս Ա. Կէօնճիկ (նուիրատու): Ն. Եորք, 1944: Էջ 95:

ՄՐՏԻ ԱԼԵԱԿՆԵՐ: Արտաշէս Տօնճոյեան (նուիրատու): Հալէպ, 1948: Էջ 46:

ԵԱԼԱԼԻ: Հրատ. Արամ Երեմեան (նուիրատու): Թէհրան: Էջ 9: (2 օրինակ):

Հետեւեալ 4 գիրքերը նուէր ստացուած են Սարգիս Բախտիկեանէ:
ԱՐԱԲԿԻՐ ԵԽ ՇՐՋԱԿԱՅԻ ԳԻՒՂԵՐԸ: Ա. Բախտիկեան: Պէյրութ, 1934: Էջ 156:

ԱՐԱԲԿԻՐՑԻ ՍՇՈՒՂՆԵՐ: Ա. Բախտիկեան: Պէյրութ, 1943: Էջ 30:

ՈՍԿԵԳԵՑԱԿ: Խմբագրեց Սարգիս Ա. Բախտիկեան: Պէյրութ, 1945: Էջ 219:

ԱՐԻՒՆՈՏ ԱՄՊԵՐ: Սարգիս Բախտիկեան: Պէյրութ, 1951: Էջ 169:

(Շարունակելի)

ՄՈՏ ՕՐԵՆ ԼՈՅՍ ԿԸ ՏԵՍՆԵՌ

Բանասէր - Հայկաբան - Պատմաբան՝ հաճգուցեալ

ԿԱՐԱՊԵՏ ԳԱՐԻԿԵԱՆԻ

ԲԱՌԴԻՐՔ ՍԵԲԱՍՏԱՀԱՅ ԳԱԻԱՌԱԼԵԶՈՒԻ

Երկասիրութիւնը, պսակեալ իզմիրեանց Գրական Մրցանակաւ

Ա. — Զայնաբանութիւն և Զայնախօսութիւն Սեբաստահայ բարբառի
 Բ. — Բառզիրք Սեբաստահայ Գաւառալեզուի. Գ. — Ժողովրդական առաջնանելուկներ, վիճակ, բաղդասելումներ, ըուսաւելումներ, բառախաղիք աղօթներ, մանիներ, տաղեր, պարերգներ, օրերգներ, անէքբոններ, առակներ, հէժիաբներ, տեղական անուններ, ցանկ՝ յատուկ անուններու և Սեբաստահայ մականուններու եւայլն, եւայլն:



Յ. ՕՉԱԿԱՆԻ

ՀԱՄԱՊԱՏԿԵՐ ԱՐԵՒՄՏԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

Ե. ՀԱՏՈՐ

“ԻՐԱՄԱՇՏՆԵՐԸ,,

(Մուլֆ, Արփիար Արփիարեան, Լեռն Բաշալեան, Գրիգոր Զօհրապ, Հրանդ, Տիգրան Կամարական, Արշակ Զապանեան, Սիպիլ, Հրանդ Սահմուր, եւ Վերջաբան մը):

